CEDEFOP
Մասնագիտական Ուսուցման
Զարգացման Եվրոպական Կենտրոն

# Աշխատանքային ծրագիր 2009





# Աշխատանքային ծրագիր 2009

Լյուքսեմբուրգ, Եվրահամայնքի Երկրների Պաշտոնական Հրատարակությունների Գրասենյակ, 2009

Եվրոպական Միության մասին մեծ չափաքանակով հավելյալ տեղեկատվություն կարելի է ստանալ ինտերնետից:
Մուտքի հնարավորություն կարելի է ձեռք բերել Europa սերվերի միջոցով (http://europa.eu):

Կատալոգի տվյալները կարելի է գտնել սույն հրատարակության վերջում:

Լյուքսեմբուրգ, Եվրահամայնքի Երկրների Պաշտոնական Հրատարակությունների Գրասենյակ, 2009

ISBN 978-92-896-0591-5

© Մասնագիտական Ուսուցման Զարգացման Եվրոպական Կենտրոն, 2009
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

*Նախագծված է Rooster Design-ի կողմից, Հունաստան*
*Տպագրված է Եվրոպական Միությունում*

**Մասնագիտական ուսուցման զարգացման եվրոպական կենտրոնը**
(Cedefop) Եվրոպական Միության մասնագիտական
կրթության և ուսուցման տեղեկատու կենտրոնն է:
Մենք տրամադրում ենք տեղեկատվություն և վերլուծություն
մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերի,
քաղաքականությունների, հետազոտության և փորձի մասին:
Cedefop-ը հիմնադրվել է 1975թ.-ին
Խորհրդի N 337/75 Կանոնակարգով:

Եվրոպա 123, 570 01 Սալոնիկ, ՀՈՒՆԱՍՏԱՆ
Փոստարկղ 22427, 551 02 Սալոնիկ, ՀՈՒՆԱՍՏԱՆ
Հեռ. +302310490111, Ֆաքս +302310490020
Էլ. փոստ: info@cedefop.europa.eu
**www.cedefop.europa.eu**

Aviana Bulgarelli, *Տնօրեն*
Christian Lettmayr, *Փոխտնօրեն*
Juan Menéndez-Valdés, *Կառավարման խորհրդի Նախագահ*



# Բովանդակություն


Ծանոթագրություն 6

Քաղաքականության նախնական մանրամասներ 8

Ծանուցում եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման /ՄԿՈՒ/ քաղաքականությունների մասին 11

Հմտությունների, կարողությունների և ուսումնառության եվրոպական միտումների ու մարտահրավերների մեկնաբանում 15

Մասնագիտական կրթության և ուսուցման առավելությունների գնահատում 18

Մասնագիտական կրթության և ուսուցման վարկանիշի բարձրացում 19

Կառավարում, ռեսուրսներ և ներքին վերահսկում 21

Աշխատանք գործընկերության միջոցով 22

Ռիսկի գնահատում 23

Գործողությունների գծապատկեր 24

Գործողության վրա հիմնված բյուջե 2009 59


**Հավելվածներ**


I. 2009թ. հրատարակությունների նախնական ցանկ 61

II. Cedefop կազմակերպության քարտեզ 63

III. Մարդկային ռեսուրսներ 64

IV. Cedefop-ի համացանցեր 66

V. Համագործակցություն Cedefop-ի և Եվրոպական Կրթական Հիմնադրամի միջև 67

VI. Համագործակցություն Cedefop-ի և Եվրոպական Հիմնադրամի միջև 68

VII. Հղումներ և հավելյալ գրականություն 69

# Ծանոթագրություն



Եվրոպական բնակչության մոտավորապես կեսը ձեռք է բերում հմտություններ մասնագիտական կրթության և ուսուցման /ՄԿՈՒ/ միջոցով: Եվրոպական Միությունը /ԵՄ/, նրա անդամ պետությունները և սոցիալական գործընկերները[1] պարտավորվել են Եվրոպայի կրթության և ուսուցման համակարգերը դարձնել աշխարհում լավագույնը: Անշուշտ, սա պահանջում է ՄԿՈՒ՝ արձագանքելու աշխատաշուկաների և տեխնոլոգիայի արագ ընթացող փոփոխություններին: ՄԿՈՒ-ն պետք է լինի ցկյանս ուսումնառության համակարգերի անքակտելի մասը՝ հնարավորություն տալու մարդկանց հարմարեցնել և զարգացնել իրենց հմտությունները շարունակաբար: Սրան հասնելու համար 2000թ.-ին ԵՄ սկսեց մշակել քաղաքականության գերակայություններ և եվրոպական ընդհանուր գործիքներ:

Հիմնադրվելով 1975թ.-ին[2] և 1995թ. ի վեր տեղակայված լինելով Հունաստանում՝ Cedefop-ը համարվում է ԵՄ գործակալություն, որն աջակցում է եվրոպական ՄԿՈՒ քաղաքականության զարգացմանը: Cedefop-ն օժանդակում է ԵՄ-ին, նրա անդամ պետություններին և սոցիալական գործընկերներին, որոնք աշխատում են ավելի սերտորեն, քան երբևէ՝ արդիականացնելու ՄԿՈՒ-ն և ստեղծելու աշխատանքի և ուսումնառության եվրոպական տարածք: Cedefop-ի հավելյալ արժեքը վերլուծությունների, փորձագիտության և տեղեկատվության բարձր որակն է՝ աջակցելու եվրոպական համագործակցությանը ՄԿՈՒ-ում: Cedefop-ն ապահովում է՝

1. անկախ գիտական եվրոպական հեռանկար զարգացումների համեմատական վերլուծությունների միջոցով, որը բարձրացնում է ՄԿՈՒ հիմնախնդիրների մասին իրազեկվածությունն ու ըմբռնումն ԵՄ շրջանում,
2. ընկալում բարդ հիմնախնդիրների մասին՝ որոշարկելու եվրոպական ընդհանուր մոտեցումներն ու սկզբունքները, որոնք հնարավորություն կտան զարգացնել ՄԿՈՒ-ն և հասնել ընդհանուր նպատակների,
3. եզակի ֆորում /համագումար/, որը միմյանց է կապում քաղաքականություն մշակողների ՄԿՈՒ բազմազան շահերը, սոցիալական գործընկերներին, անհատ ուսումնառուներին, հետազոտողներին և մասնավոր պրակտիկայով զբաղվողներին՝ վիճարկելու քաղաքականության և հետազոտության վերաբերյալ առաջարկները,
4. մեծացված իրազեկվածություն ՄԿՈՒ ընդհանուր պատկերի և կարևորության մասին՝ երաշխավորելով, որ ՄԿՈՒ հիմնախնդիրները հաշվի են առնվում այլ քաղաքականություններում ևս՝ ներառյալ ընդհանուր կրթությունը, զբաղվածությունը և սոցիալական քաղաքականությունը:

Հմտություններն իրենց հետ բերում են հնարավորություն, անաչառություն և առաջընթաց: Մարդկանց համար հնարավորություններ կարող են առաջանալ աշխատանքի լավ հեռանկարների, իսկ գործարարության համար մրցունակ լինելու միջոցով: Այստեղ անաչառության գործոնն ամրապնդվում է, քանի որ հմտությունները կարող են օգնել մարդկանց աշխատաշուկայում հաղթահարել աշխատանքային կյանքին առնչվող խոչընդոտները[3]: Առաջընթացը կարող է շոշափելի լինել, քանի որ հմտությունները կարող են նպաստել նորարարությանը[4], զարգացմանը, ավելի լավ ծառայություններին ու անվտանգ արտադրանքներին /պրոդուկտներին/:

Cedefop-ի 2009-11թթ. ռազմավարական նպատակը[5] «ՄԿՈՒ գերազանցությանը նպաստելն ու մշակման, իրագործման և ՄԿՈՒ եվրոպական քաղաքականության գնահատման մեջ եվրոպական համագործակցությունն ամրապնդելն է»:

Սույն ռազմավարական նպատակին աջակցում են չորս գերակայություն, այն է՝

1. տեղեկատվության ապահովում եվրոպական ՄԿՈՒ քաղաքականությունների մասին,
2. հմտությունների, կարողությունների և ուսումնառության եվրոպական միտումների ու մարտահրավերների մեկնաբանում[6],

3. ՄԿՈՒ առավելությունների գնահատում,
4. ՄԿՈՒ վարկանիշի բարձրացում:

Սույն գերակայություններն ուղղորդում են Cedefop-ի աշխատանքային ամենամյա ծրագրերը: Դրանք կենտրոնացնում են իրենց աշխատանքները ՄԿՈՒ քաղաքականության մշակմանն օժանդակելու վրա՝ ամրապնդելով եվրոպական համագործակցությունը նոր գիտելիքի, ավելի լավ ըմբռնման և երկկողմ ուսումնառության միջոցով: Օգտագործելով հետազոտության, քաղաքականության վերլուծության ու ցանցավորման արդյունքում ստացված փորձագիտությունը՝ Cedefop-ը մշտադիտարկում և ծանուցում է ՄԿՈՒ քաղաքականությունները, օգնում է նախագծել և մշակել եվրոպական ընդհանուր սկզբունքներ ու գործիքներ՝ նպաստելու քաղաքականության իրագործմանը: Այն իր հետ բերում է նոր գիտելիք հմտությունների և կարողությունների մասին, խթանում է բանավեճ և տարածում է տեղեկատվություն իր կայքէջի, հրատարակությունների, համացանցերի, ուսումնական այցերի, համագումարների և սեմինարների միջոցով:

Cedefop-ի գործողությունները համապատասխանում են և՛ նախնական, և՛ շարունակական ՄԿՈՒ-ին, ինչպես նաև ցկյանս ուսումնառությունում նրանց ունեցած ավանդին: Արդյունքներն ուղղված են եվրոպական հաստատություններում որոշում կայացնողներին, անդամ պետություններին և սոցիալական գործընկերներին, ովքեր մասնակից են ՄԿՈՒ քաղաքականության և փորձի միանգամայն բոլոր մակարդակներին, մասնավորապես ոլորտային հատվածներում և ձեռնարկություններում:

Սույն աշխատանքային ծրագիրը վերծանում է այն, թե Cedefop-ն ինչպես կարող է օժանդակել 2009թ. եվրոպական ՄԿՈՒ քաղաքականության մշակմանը: Այն բաժանվում է՝

1. պատմողական, որը վերանայում է քաղաքականության նախնական մանրամասները, իսկ այնուհետև վերծանում, թե Cedefop-ն ինչպես ընդառաջ կգնա իր չորս գերակայություններից յուրաքանչյուրին 2009թ.-ին /տե՛ս Աղյուսակ 1-ը/,
2. մանրամասն գործողություններ և ծրագրի գծապատկեր: Դրանք ներկայացնում են Cedefop-ի աշխատանքը տրամաբանական շրջանակում՝ ցույց տալով յուրաքանչյուր գործողության ակնկալվող ներգործությունը և առնչություն ունեցող յուրաքանչյուր նախագծի արդյունքը: Գործողությունը կարող է ներառել մի քանի նախագծեր, և հարկ է նշել, որ որոշակի գործողության մեջ ներառված ոչ բոլոր նախագծերն են ծառայում միևնույն գերակայությանը: Թե ինչպես են գործողությունները և նրանց նախագծերն առնչվում չորս գերակայություններից յուրաքանչյուրի հետ, ցույց է տրված «Համապատասխանությունը միջնաժամկետ գերակայությունների, գործողության վրա հիմնված բյուջետային գործողությունների և նախագծերի միջև» աղյուսակում,
3. գործողության վրա հիմնված բյուջե, որը ցույց է տալիս՝ ինչպես են մարդկային և ֆինանսական ռեսուրսները բաշխվում յուրաքանչյուր գործողությանը:

Աշխատանքային ծրագիրը համաձայնեցված է եվրոպական ՄԿՈՒ քաղաքականության շրջանակի հետ՝ սահմանված Լիսաբոնի ռազմավարության[7] *Կրթություն և ուսուցում 2010* աշխատանքային ծրագրի[8] և կոպենհագենյան գործընթացի[9] կողմից: Այն նաև համապատասխանում է ցկյանս ուսումնառությանն առնչվող քաղաքականության այնպիսի նոր զարգացումներին, ինչպիսիք են Եվրոպայի սոցիալական վերանայված օրակարգը[10], կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական համագործակցության ռազմավարական նորացված շրջանակի պատրաստումը[11], որը, ակնկալվում է, որ կներառի թեմաներ, որոնց վրա Cedefop-ն արդեն իսկ աշխատում է, օրինակ՝ ուսումնառության արդյունքներ, ցկյանս ուղղորդում, ուսուցիչներ և դասընթացավարներ, ինչպես նաև «Նոր հմտություններ նոր աշխատանքների համար»-ի վերաբերյալ Հանձնաժողովի առաջիկա զեկույց՝ աշխատաշուկայի և հմտությունների կարիքների կանխորոշում և համապատասխանեցում:



Աշխատանքային ծրագիրը համաձայնեցված է նաև Եվրոպական Հանձնաժողովի՝ Cedefop-ի գնահատման հետ[12] /իրականացված 2008թ./՝ կենտրոնանալով Cedefop-ի՝ քաղաքականության մշակմանն օժանդակելու աշխատանքի և Cedefop-ում զեկույցներ և այլ քաղաքականություններ ստեղծելու գործում զարգացումներ ենթադրելու վրա՝ համալրելու սույն մոտեցումը:

Համաձայն 2009-11թթ. գերակայությունների՝ Cedefop-ը կշարունակի այն գործողությունները, որոնք առաջատար նախագծեր են 2009թ. համար: Նախ, Cedefop-ի օժանդակությունը կոպենհագենյան գործընթացին դրա վերաբերյալ քաղաքականության երրորդ զեկույցի շուրջ ծավալված բանավեճի միջոցով, որը վերանայում է անդամ պետությունների առաջընթացը ՄԿՈՒ ոլորտում եվրոպական համաձայնեցված գերակայություններն իրագործելու աշխատանքում: Այնուհետև, Cedefop-ի աշխատանքը հմտությունների և դրանց անհամապատասխանության հետագա պահանջարկի և առաջարկի վերաբերյալ, որը կապակցվում է Եվրոպական Հանձնաժողովի 2008թ. դեկտեմբերի զեկույցին: Երրորդ, Cedefop-ի՝ ուսումնառության արդյունքների տարբեր ասպեկտների վերլուծությունները, որոնք շարունակում են ուսումնասիրել հետևանքները՝ որպես դասավանդման, ուսուցման և ուսումնառության մոտեցումների արմատական փոփոխություն: Չորրորդ, Cedefop-ի փորձագիտական աջակցությունն եվրոպական ընդհանուր գործիքների մշակմանը:

Cedefop-ի 2009թ. գործողությունները նաև նկատի կառնվեն 2010թ.-ին. երբ 2000թ. Լիսաբոնում համաձայնեցված առկա ռազմավարությունը նախագծվի մինչև վերջ: 2009թ. Cedefop-ի մեկնարկած մի քանի ուսումնասիրություններն արդեն կամփոփվեն 2010թ.-ին: Դրանք կօգնեն անցում կատարել դեպի նոր ռազմավարություն և վերջինիս կապահովեն փաստերի հստակ բազայով:

## Քաղաքականության նախնական մանրամասներ

Ընդհանուր կարողությունների մակարդակները պետք է բարձրանան՝ բավարարելու աշխատաշուկայի պահանջները և քաղաքացիներին ապրուստի բարձր ստանդարտներ վայելելու հնարավորություն տալու: Եվրոպայում կա մոտ 80 միլիոն հմտությունների ցածր մակարդակ ունեցող մարդ՝ աշխատող բնակչության մեկ երրորդը: Կանխատեսումները ցույց են տալիս գրեթե 12.5 միլիոն աշխատանքի կտրուկ նվազում որակավորում չունեցող կամ ֆորմալ որակավորում ունեցող մարդկանց համար: Այնուամենայնիվ, Եվրոպան[13] մոտ ապագայում գործ կունենա հմտությունների գլխավոր խնդրի հետ: Ակնկալվում է, որ 2006-2020թթ. ընթացքում մոտ 20 միլիոն նոր աշխատանք կստեղծվի: Համաձայն Cedefop-ի ուսումնասիրության՝[14] լրացուցիչ աշխատանքների մեծ մասը 2006-20թթ. ընթացքում կպահանջեն բարձր մակարդակի որակավորումներ: Սակայն դպրոցը վաղ լքողների թվաքանակը /2007թ. դպրոցը միայն ցածր միջնակարգային կրթությամբ ավարտել է յուրաքանչյուր յոթերորդ երիտասարդ անձ/ դեռևս մնում է բարձր: Ակնկալվում է, որ նոր աշխատանքների գրեթե կեսը /նոր աշխատանքներ՝ գումարած աշխատանքներ, որոնք կփոխարինեն աշխատաշուկայից հեռացող մարդկանց/ կպահանջեն միջին մակարդակի որակավորումներ: Բացի այդ, ներկայիս շատ աշխատանքների համար պահանջվող հմտությունները կփոխվեն՝ պահանջելով, որ մարդիկ շարունակաբար արդիականացնեն դրանք: Այդ աշխատանքներից շատերը կպահանջեն մասնագիտական որակավորումներ՝ շեշտադրելով ՄԿՈՒ կենսական դերակատարությունը ցկյանս ուսումնառությունում: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ թվով քիչ մեծահասակներ են մասնակցում ցկյանս ուսումնառությանը[15], իսկ վերջին

տարիներին չի գրանցվել որոշակի էական առաջընթաց[16]: Ուստի, շատ հատվածներում ակնհայտորեն նկատվում է որակավորումների համապատասխան մակարդակներով մարդկանց աճող կարիք և նույնիսկ պակաս:

Եվրոպական սոցիալական միտումները[17] ևս շեշտադրում են հմտությունների կարևորությունը: Ավելի շարժուն երիտասարդ սերունդը պահանջում է լեզվական և մշակութային հմտություններ: Կլիմայական փոփոխությունները և բնական ռեսուրսների վրա աճող ճնշումը հանգեցնում է նորարարության և նոր «կանաչ» աշխատանքների կարիքին: Վերաբնակիչներն ու վերաբնակչի կարգավիճակ ունեցող երկրորդ սերնդի ուսումնառուների աճող թվաքանակը[18] պահանջում են ճշգրիտ հմտություններ՝ հաջողությամբ ինտեգրվելու[19]:

Կրթության ձեռքբերման ցածր մակարդակները և անբավարար հմտությունները աշխատաշուկայի վատ կատարողականության և սոցիալական մերժման հիմնական պատճառներն են: Դրանք սպառնում են տարեց աշխատողներին և հասարակության թիրախային խմբերին, ովքեր կանգնած են աշխատանքը կորցնելու կամ չգտնելու վտանգի առջև: Նրանք բևեռացնում են աշխատանքները՝ դրանք բաժանելով լավ պայմաններով բարձրորակ աշխատանքների և վատ պայմաններով ցածրորակ աշխատանքների: Շեշտադրվում է «թվային անհավասարությունը» /օր.՝ ինտերնետային հասանելիություն ունեցող և չունեցող մարդիկ/ նոր տեխնոլոգիաներից շահող և դրանցից տուժող մարդկանց միջև: Նրանք բաժանում են շրջաններն ու ոլորտները՝ զարգանալով մյուսների գլոբալիզացման միջոցով, ովքեր պայքարում են տնտեսական վերակառուցման համար: Սոցիալական համախմբվածությունը խաթարող այսպիսի տարանջատումներից խուսափելու համար Եվրոպան պետք է ավելի շատ ներդրումներ կատարի մարդկային և սոցիալական կապիտալի մեջ: ՄԿՈՒ-ն Եվրոպայի սոցիալական նոր օրակարգի ձևավորման հիմնական գործիքն է[20]:



Աղյուսակ 1. Աշխատանքային ծրագիր 2009, Cedefop-ի 2009-11թթ. միջնաժամկետ գերակայությունների միջև փոխկապակցվածությունը, գործողության վրա հիմնված բյուջետային գործողություններ և նախագծեր



ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 1

# Ծանուցում եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման /ՄԿՈՒ/ քաղաքականությունների մասին

Կատարելով հատուկ շեշտադրում կրթության և ուսուցման վրա՝ Լիսաբոնի 2008-10 պարբերաշրջանը կենտրոնանում է առկա քաղաքականությունների մշակման և իրագործման վրա: Cedefop-ը միավորում է քաղաքականության վերլուծությունը, հետազոտությունը, փորձագիտությունը և հավասար ուսումնառությունը՝ աջակցելու եվրոպական ՄԿՈՒ քաղաքականությունների և եվրոպական ընդհանուր գործիքների ու սկզբունքների մշակմանը:

Հետևելով Մաաստրիխի, Հելսինկիի[21] և Բորդոյի կոմյունիկներում /2008թ. նոյեմբեր/[22] նախարարների կողմից ստացված հանձնարարագրին /մանդատ/՝ Cedefop-ը կկազմակերպի բանավեճ **Կոպենհագենի գործընթացի վերաբերյալ քաղաքականության իր երրորդ զեկույցի** արդյունքների և եզրակացությունների մասին: Սույն զեկույցը փոխարինում է 2004թ.-ին Մաաստրիխում[23] և 2006թ.-ին Հելսինկիում[24] ներկայացված զեկույցներին և վերանայում է այն, թե ինչ են անում անդամ պետությունները՝ հասնելու քաղաքականության եվրոպական համաձայնեցված ընդհանուր նպատակներին: Իր վերլուծությունը սահմանելով սոցիալ-տնտեսական հստակ համատեքստում՝ զեկույցի նպատակն է լինել արժեքավոր աղբյուր փաստերի վրա հիմնված եվրոպական ՄԿՈՒ քաղաքականությունների համար՝ փոխանակելով գիտելիք, ինչպես նաև խթանելով տարբեր գաղափարներ և նորարարություն: Գլխավոր քաղաքականություն մշակողները կվիճարկեն զեկույցի արդյունքները 2009թ. մարտին Cedefop-ի Agora /հավաքատեղի/ կոնֆերանսում, որը կկազմակերպվի Չեխիայի Նախագահության հետ համատեղ ուժերով: Cedefop-ը կտարածի զեկույցը լայն ծավալներով և դրա եզրակացությունների շուրջ բանավեճ կխթանի տարվա ընթացքում համագումարներին և հանդիպումներին ներկայացվող շնորհանդեսների միջոցով: Համագործակցելով Եվրոպական Հանձնաժողովի հետ՝ Cedefop-ը նպաստում է Կրթություն և ուսուցում 2010 աշխատանքային ծրագրի շրջանակներում անդամ պետությունների կատարած ազգային զեկույցներում վեր հանված ՄԿՈՒ գերակայությունների իրագործման մշտադիտարկմանը:

Կոպենհագենյան գործընթացում քաղաքականության մշակման համար փաստերի բազան ամրապնդելու համար Cedefop-ը կազմակերպել է հետազոտության փորձագիտություն՝ ուսումնասիրելու ՄԿՈՒ քաղաքականության գերակայությունները: 2009թ.-ին Cedefop-ը կտարածի **«Մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում, ՄԿՈՒ հետազոտության վերաբերյալ Cedefop-ի չորրորդ զեկույց»**-ի արդյունքները: Ընդունելով միջնաժամկետ մոտեցում /հեռանկար/՝ զեկույցը վերլուծում է այն, թե ինչպես են ծերացող աշխատուժը, համապատասխան հմտություններ չունեցող անձինք, ձեռնարկությունների՝ սովորելու և նորարարելու կարիքը, ինչպես նաև սոցիալական համախմբվածությունը մեծացնելու նպատակն անդրադառնում ՄԿՈՒ վրա:

Հետազոտությունն ենթադրում է չորս հավելյալ գործոն կոպենհագենյան գործընթացում հետագա քաղաքականության մշակման համար՝ սոցիալական, տնտեսական, ինստիտուցիոնալ և մասնագիտական: Ինչ վերաբերում է սոցիալական մասին, ապա փաստերը վկայում են, որ ՄԿՈՒ-ն ունի գլխավոր դերակատարություն՝ նվազեցնելու սոցիալական մերժվածությունը և մեծացնելու սոցիալական համախմբվածությունը: Տնտեսական մասի վերաբերյալ կարելի է ասել, որ հետազոտությունը հաստատում է ուսուցման /վերապատրաստում/ ծայրահեղ կարևոր լինելը՝ ցույց տալով, որ ընկերությանը տրամադրվող ուսուցումը նպաստում է գործընթացի և արդյունքների նորարարությանը, տնտեսական աճին և արդյունավետությանը: ՄԿՈՒ գրավչության վերաբերյալ հետազոտությունը շեշտադրում է, որ ինստիտուցիոնալ որոշ քաղաքականություններ ներկայացնում են որոշակի հետաքրքրություն: Սա ներառում է ՄԿՈՒ իրականացման բազմազանեցումը՝ հնարավորությունների տրամադրում ցածր ընդունակություններ ունեցող ուսանողներին, մոդուլային ուսուցում, ընդհանուր կրթություն կրկին մուտք գործելու լրացուցիչ տարբերակներ և՛ միջնակարգ, և՛ բարձրագույն մակարդակներում, ինչպես նաև ՄԿՈՒ համակարգերի ղեկավարման արդիականացում /որակի ապահովում, որակավորումների շրջանակներ, գործընկերություններ/: Զեկույցը հաստատում է տեղեկատվության, խորհրդատվության և ուղղորդման կարևորությունը՝ կարիերային առնչվող որոշումներ կայացնելը



դարձնելու ավելի արդյունավետ կյանքի ողջ ընթացքում: Հետազոտությունն առաջարկում է տարբեր եղանակներ՝ արդիականացնելու տեղեկատվությունը, խորհրդատվությունն ու ուղղորդումը, և առավելագույնս մեծացնելու դրա ազդեցությունը՝ ձեռնամուխ լինելով մասնագիտական փորձին:

Ելնելով ազգագրական փոփոխությունից և «ծերացման վերաբերյալ ակտիվ քաղաքականություններում» ՄԿՈՒ դերակատարությունից՝ /աջակցելու **տարեց աշխատողներին** մեծահասակների ուսումնառության վերաբերյալ Խորհրդի եզրակացություններում[25]/՝ Cedefop-ը կշրջանառի ծերացման, աշխատանքի կատարողականության և ուսումնառության միջև կապի վերաբերյալ առկա և նոր հետազոտության վերլուծության արդյունքում ստացված տվյալները:

**ՄԿՈՒ ազգային համակարգերի** և զարգացումների վերաբերյալ Cedefop-ի տվյալների բազան անդամ պետությունների միջև համեմատություններ անցկացնելու հնարավորություն է տալիս: Զեկույցները կխմբագրվեն և կնորացվեն անգլերեն լեզվով անդամ բոլոր պետությունների համար Cedefop-ի եվրոպական ուսուցման կայքէջում (http://www.trainingvillage.gr/):

Կոպենհագենյան գործընթացում համաձայնեցված կոմյունիկեները և Խորհրդի եզրակացությունները **վիճակագրության և ցուցիչների** համապարփակ շրջանակ ստեղծելու կոչ են անում, իսկ Կոպենհագենի գործընթացը՝ կրթության և ուսուցման քաղաքականության առաջընթացի մշտադիտարկում[26]: Cedefop-ը, համագործակցելով Եվրոպական Հանձնաժողովի և Կրթության և Ցկյանս Ուսումնառության Հետազոտության Կենտրոնի /ԿՑՈւՀԿ, CRELL/ հետ, կշարունակի օժանդակել ՄԿՈՒ համապատասխան վիճակագրության և ցուցիչների մշակմանը: Cedefop-ը կտարածի ձեռնարկություններում շարունակական մասնագիտական ուսուցման երրորդ ուսումնասիրության /ՇՄՈւՈւ3, CVTS3/ վերլուծությունների տվյալները: Այն իր հետ կբերի նոր ըմբռնումներ ներդրումների մասին և մասնակցություն ձեռնարկություններում իրականացվող ուսուցմանը: Cedefop-ը կշարունակի աջակցել վիճակագրական գործողություններին եվրոպական և միջազգային մակարդակներում՝ կատարելագործելու տվյալների որակը, մեթոդներն ու հավաքագրումը: Այն կաշխատի տվյալներ քաղել Աշխատուժի Ուսումնասիրությունից և նպաստել Մեծահասակների Կրթության Ուսումնասիրության զարգացումներին:

**Որակավորումների Եվրոպական Շրջանակը /ՈԵՇ/** Եվրոպայում որակավորումները համեմատելու գործիք է՝ սատարելու ցկյանս ուսումնառությանը և կրթական ու աշխատանքային շարժունությանն ոչ միայն երկրների, այլ նաև երկրների կրթության և ուսուցման տարբեր հատվածների միջև: Սա աստիճանաբար դառնում է կարևոր հանգամանք, քանի որ ՄԿՈՒ, ընդհանուր և բարձրագույն կրթության միջև սահմաններն աղոտանում են: Բարձրագույն կրթության ծրագրերն ավելի ու ավելի են առնչություն ունենում աշխատաշուկայի կարիքների հետ, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններն ավելի շատ գնում են դեպի շարունակական ուսուցում: ՈԵՇ-ը և որակավորումների ազգային շրջանակները /ՈԱՇ-ներ/ ձեռնամուխ կլինեն ուսումնառության ճկուն ուղիների ստեղծմանը՝ մարդկանց հնարավորություն տալով ՄԿՈՒ-ից անցնել ընդհանուր կրթություն և հակառակն ուսումնառության բոլոր մակարդակներում: Cedefop-ը կհիմնվի Եվրոպական Կառավարության և Խորհրդի՝ ՈԵՇ-ը հաստատելու երաշխավորության վրա[27] և կօժանդակի Եվրոպական Հանձնաժողովին՝ համաձայնեցնելով ՈԵՇ-ի խորհրդատվական խմբի հետ /նաև ենթախմբերի հետ/: Cedefop-ը հետամուտ կլինի ՈԵՇ-ի իրագործման աշխատանքին գիտական փորձագիտության, տարբեր ուսումնասիրությունների և համեմատական վերլուծությունների արդյունքում ստացված հայեցակարգային և մանրամասն տեղեկատվության միջոցով: Այս աշխատանքի առանցքային ասպեկտը շահագրգիռ բոլոր կողմերին խորհրդատվությամբ ապահովելն ու ներգրավելն է՝ ներառյալ սոցիալական գործընկերներին, որոնց ավանդն ՈԱՇ-ներում էական է իրենց իսկ համար, որպեսզի ունենան որոշակի արժեք աշխատաշուկայում:

ՈԵՇ-ի նկատմամբ համոզմունք ներշնչելու նպատակով Cedefop-ը կծանուցի, թե ինչպես է ապահովվում որակը վկայագրման գործընթացներում: Այն նաև կորոշարկի ՈԱՇ-ների ուժն ու



սահմանափակումները, ինչպես նաև այն, թե ինչ չափով են նրանք կատարելագործում որակավորումների մուտքի հնարավորությունը, փոխանցումը և ճանաչումը: Cedefop-ը նաև խորհրդատվություն կտրամադրի ՈԵՇ-ի որակավորումների բարձրագույն մակարդակներում ՄԿՈՒ-ին առնչվող առկա միտումների, հնարավորությունների և խոչընդոտների, ինչպես նաև Leonardo da Vinci և Ցկյանս ուսումնառության ծրագրերում ՈԵՇ-ի թռիչքային նախագծերի արդյունքների մասին: Եվրոպական Հանձնաժողովի հետ համատեղ՝ Cedefop-ն ավարտուն տեսքի կբերի ՈԵՇ-ի տեղեկատվական պլատֆորմը, որը հիմք կհանդիսանա՝ համապատասխանեցնելու որակավորումների ազգային մակարդակներն ՈԵՇ-ին:

Մշակվում է **ՄԿՈՒ եվրոպական կրեդիտային համակարգը** /ՄԿՈՒԵԿ/՝ ուսումնառության արդյունքների կրեդիտներին հնարավորություն տալու փոխանցվել որակավորումների մի մահակարգից մյուսին կամ ընդհանուր կրթությունից մասնագիտական կրթություն՝ խրախուսելով ցկյանս ուսումնառությանը ՄԿՈՒ միջոցով: Cedefop-ը հիմք կընդունի Եվրոպական Կառավարության և Խորհրդի կողմից առաջարկված Երաշխավորությունը՝[28] տրամադրելով տեխնիկական և գիտական աջակցություն Եվրոպական Հանձնաժողովի աշխատանքային խմբերին և ՄԿՈՒԵԿ-ի եվրոպական ցանցին: Վերլուծելով ՄԿՈՒԵԿ-ի նորարարական ասպեկտները՝ Cedefop-ը հետամուտ կլինի կրեդիտային համակարգերի և եվրոպական, ազգային և ոլորտային որակավորումների շրջանակների միջև կապի հաստատմանը: Այն նաև ցկյանս ուսումնառության եվրոպական կրեդիտային համակարգին ուղղված քայլեր կձեռնարկի՝ ներառյալ բարձրագույն կրթության եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգի /ԵԿՓՀ/ և ՄԿՈՒԵԿ-ի միջև կապի ստեղծումը:

**Որակի ապահովումը** ՄԿՈՒ այլ համակարգերում վստահության հիմքն է հանդիսանում: ՈԵՇ-ի և ՄԿՈՒԵԿ-ի հաջողությունը կախված է այս վստահության առկա լինելուց: Դրանից բխում է նաև ՄԿՈՒ եվրոպական որակի ապահովման հենքային շրջանակի վերաբերյալ առաջարկված Երաշխավորության ընդունումը և իրագործումն[29] Եվրոպական Հանձնաժողովի և ՄԿՈՒ որակի ապահովման եվրոպական ցանցի /ՄԿՈՒ-ՈԱԵՑ/ հետ միասին: Cedefop-ը կշարունակի օժանդակել որակի ապահովմանը՝ տարածելով անդամ պետություններում ՄԿՈՒ իրականացնողների հավատարմագրման մոտեցումների և ծրագրերի վերաբերյալ իր թռիչքային ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները: Գործընթացը կսկսվի 2009թ.-ին համեմատական ավելի լայնածավալ վերլուծության մեկնարկումով, որն էլ կլինի 2010թ.-ին Cedefop-ի և Եվրոպական Հանձնաժողովի գարնանային համատեղ համագումարի թեման: Cedefop-ը նաև կշրջանառի սննդի տեխնոլոգիական մշակման, մանրածախ առևտրի և տուրիզմի ոլորտներում եվրոպական փոքր և միջին ձեռնարկությունների որակի մոտեցումների մասին տեղեկությունը, ինչպես նաև կավարտի սոցիալական ապահովման ոլորտի մասին ուսումնասիրությունը: 2009թ.-ին, ՄԿՈՒ-ՈԱԵՑ-ի աշխատանքի հետ համատեղ, պլանավորվում է հավասար ուսումնառության գործընթաց, որը կուսումնասիրի որակի ապահովման հետ առնչվող սոցիալական գործընկերների գերակայությունները:

Ցկյանս ուսումնառության վերաբերյալ տեղեկացված ընտրություն կայացնելու և կարիերա ծավալելու համար մարդկանց անհրաժեշտ է **ուղղորդում կյանքի ընթացքում:** Ուղղորդման վերաբերյալ 2004թ.-ին Խորհրդի կողմից ստորագրված Որոշման[30] իրագործման աշխատանքում Եվրոպական Հանձնաժողովին օժանդակելու համար և, հետևելով Խորհրդի նոր Որոշմանը[31], Cedefop-ը կորոշարկի հաջող նախաձեռնություններ և կներկայացնի առաջարկներ քաղաքականության մշակման և իրագործման համար: Կրթությունից աշխատանք տեղափոխվող երիտասարդների ուղղորդման հետ կապված Cedefop-ի ուսումնասիրությունը կվիճարկվի և կլինեն առաջարկներ, թե ինչպես լավագույնս աջակցել նրանց: Cedefop-ը կնպաստի պրակտիկայով զբաղվողների ուղղորդման համար կարողությունների վրա հիմնված եվրոպական շրջանակի վերաբերյալ բանավեճի ծավալմանը՝ տրամադրելով տեղեկատվություն այն որակավորումների և



կարողությունների մասին, որոնց կարիքն ունեն կարիերայի ուղղորդման խորհրդատուները: Այն նաև կուսումնասիրի ուղղորդման դերակատարությունը ռազմավարություններում՝ աջակցելու տնտեսական վերակառուցման պատճառով վտանգի ենթարկված աշխատողներին:

Եվրոպական Կառավարության և Խորհրդի Որոշումը հիմնադրեց **Europass**-ը՝[32] խթանելու աշխարհագրական և աշխատանքային շարժունությունը: Այն հինգ գործիքներից կազմված փաթեթ է՝ օգնելու, որպեսզի մարդկանց հմտություններն ու որակավորումներն ավելի հեշտ ընկալվեն Եվրոպայում: Cedefop-ը կշարունակի օժանդակել Եվրոպական Հանձնաժողովին Europass-ի արտաքին գնահատման առաջարկների[33] իրագործման աշխատանքում և կկատարելագործի Europass-ի CV-ին՝ խորհրդակցելով շահագրգիռ այնպիսի խմբերի հետ, ինչպիսիք են գործատուներն ու զբաղվածության գործակալությունները: Այն կշարունակի զարգացնել և պահպանել Europass-ի վեբ ռեսուրսները (http://europass.cedefop.europa.eu) և կխրախուսի Europass-ի ազգային կենտրոններին՝ երաշխավորելու, որ Europass-ը համալրում է առնչվող այնպիսի գործիքներին, ինչպիսիք են ՈԵՇ-ը և ՄԿՈՒԵԿ-ը:

Կրթության և մասնագիտական ուսուցման մասնագետների ուսումնական այցերն օժանդակում են ցկյանս ուսումնառության եվրոպական համագործակցությանը և քաղաքականության մշակմանը: Նրանք տարբեր երկրների փորձագետներին ապահովում են միմյանց հետ հանդիպելու, ընդհանուր շահերի հիմնախնդիրները քննարկելու և փորձի փոխանակման հնարավորությամբ: Ուսումնական այցերը 2007-13թթ. Ցկյանս ուսումնառության ծրագրի[34] մի մասն են կազմում: Դրանք իրականացվում են ազգային գործակալությունների միջոցով և համակարգվում են Cedefop-ի կողմից Եվրոպական Հանձնաժողովի անունից: 2008-09թթ. ուսումնական տարում Cedefop-ը կիրականացնի և կմշտադիտարկի 260 ուսումնական այց մոտավորապես 2 600 մասնակիցներով և 40 թեմայով՝ նկատի ունենալով ազգային և եվրոպական մակարդակներում կրթության և ուսուցման համար սահմանված գերակայությունները: Ուսումնական այցերի ծրագրի որակի ապահովումը կլինի հատուկ կիզակետ 2009թ.-ին և կներառի այցերի ներգործությունը չափագրելու գնահատման գործիքներ: Cedefop-ը կգնահատի ուսումնական այցերի արդյունքները և կորոշարկի լավագույն փորձի օրինակներն ու կտարածի դրանք լայնորեն: 2009-10թթ. ուսումնական տարվա համար Cedefop-ը կպատրաստի և կտարածի այցերի կատալոգը, կհամակարգի դիմումներն ու կմշտադիտարկի ուսումնական այցերի իրականացումը: Cedefop-ը հետագայում կկատարելագործի իր ինտերակտիվ կառավարման տեղեկատվական համակարգը: Աշխատելով Եվրոպական Հանձնաժողովի հետ՝ Cedefop-ը կշարունակի ջանքեր գործադրել՝ ամրապնդելու կապն ուսումնական այցերի ծրագրի և եվրոպական ու ազգային մակարդակներում կրթության և ուսուցման համար սահմանված քաղաքականության գերակայությունների միջև /Լիսաբոնի ռազմավարություն և Կոպենհագենի գործընթաց/:

Cedefop-ը խրախուսում է ուսումնական այցերում սոցիալական գործընկերների մասնակցությունը՝ նրանց ապահովելու կրթության և ուսուցման մասնագետների հետ փորձի ու գիտելիքի փոխանակման հնարավորությամբ: Cedefop-ը կշարունակի երաշխավորել, որ ուսումնական այցերը հետապնդում են սոցիալական գործընկերների շահերը: Այն կբարձրացնի սոցիալական գործընկերների կարիքների մասին իրազեկվածությունը մասնակից երկրներում ծրագիրն իրականացնող ազգային գործակալությունների շրջանում և կտեղեկացնի, թե ինչպես բավարարել դրանք: Հրատարակությունների, սեմինարների և թիրախային այլ գործողությունների միջոցով Cedefop-ը կխրախուսի սոցիալական գործընկերներին՝ մասնակցելու ուսումնական այցերին:

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 2

# Հմտությունների, կարողությունների և ուսումնառության եվրոպական միտումների ու մարտահրավերների մեկնաբանում

Եվրոպական միտումները մեկնաբանելու համար Cedefop-ի աշխատանքը հիմնվում է առնչվող երեք ասպեկտի վրա՝ հմտության պահանջարկի ու առաջարկի վերլուծություն, մարդկանց՝ հմտություններ ձեռք բերելու եղանակին ուղղված միտումների ուսումնասիրում և օժանդակում ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների մասնագիտական զարգացմանը:

ԵՄ-ում հմտությունների հետագա պահանջարկն ու առաջարկը, բոլոր մակարդակներում հմտության և կարողության նոր առաջացող պահանջների վաղ որոշարկումը, ազգագրության փոփոխության և տնտեսական վերակառուցման հետևանքով առաջացող հմտության հնարավոր թերությունների և անհամապատասխանության կանխորոշումն ու կանխարգելումն ԵՄ քաղաքականության ընթացիկ օրակարգի կորիզն են կազմում՝ համապատասխանելով Լիսաբոնի ռազմավարությանը: 2008-10թթ. աճի և աշխատանքների ամբողջական ուղենիշները և նոր աշխատանքների համար նոր հմտությունների վերաբերյալ Խորհրդի 2007թ. Որոշումը[35] կարևոր փուլանիշեր են սույն ռազմավարությունում: Ի պատասխան հմտությունների հետագա պահանջների գնահատման վերաբերյալ Խորհրդի հարցապնդմանը՝[36] Cedefop-ը նպաստեց Հանձնաժողովի՝ աշխատաշուկայի և հմտությունների կարիքների կանխորոշման և համապատասխանեցման վերաբերյալ զեկույցին[37]: Cedefop-ն ապահովեց մինչև 2020թ. հմտությունների կարիքների կանխատեսումը[38], ինչպես նաև եվրոպական անդամ երկրներում տնտեսության առանցքային ոլորտների և հմտությունների կարիքների վաղ որոշարկման համակարգերի հմտության կարիքների վերլուծությունները[39]:

Անցյալ տարիների ընթացքում Cedefop-ը դարձել է **հմտությունների կարիքների վերլուծության և կանխորոշման** առանցքային տեղեկատու: 2009թ.-ին Cedefop-ը կշարունակի լինել ակտիվ այս հատվածում: Ստանալով ֆինանսական աջակցություն եվրոպական Հանձնաժողովի՝ Զբաղվածության և Կրթության ու Մշակույթի Գլխավոր Ղեկավարությունից՝ Cedefop-ը կօգնի ստեղծել ԵՄ աշխատաշուկաների երկարաժամկետ առաջարկի և պահանջարկի կանոնավոր, սիստեմատիկ գնահատում, ինչպես նաև կներգրավվի նոր հետազոտության մեջ՝ հարթելու գիտելիքին առնչվող թերությունները, օրինակ՝ հմտության պահանջարկի և առաջարկի միջև փոխներգործության մասին: Անելով սա՝ այն կշարունակի ունենալ կարևոր դերակատարություն նոր աշխատանքների համար նոր հմտությունների վերաբերյալ Հանձնաժողովի վերոնշյալ զեկույցի իրագործման համար և կաջակցի եվրոպական Հանձնաժողովին հետագա զարգացման մեջ: Cedefop-ը կկազմակերպի Agora /հավաքատեղի/ համագումար Սալոնիկում՝ ներկայացնելու և քննարկելու հմտության առաջարկի կանխորոշման իր ունեցած արդյունքներն ու պահանջարկի և առաջարկի միջև աշխատաշուկայի հնարավոր անհավասարությունները:

Այնուամենայնիվ, հմտության պահանջարկի և առաջարկի կանխատեսումները վերաբերում են մակրոտնտեսական զարգացումներին և ֆորմալ հմտություններին ու որակավորումներին: Ոլորտների մեզո մակարդակում և ձեռնարկությունների միկրո մակարդակում հմտությունների և կարողությունների կարիքների վերլուծությունը և՛ քանակական, և՛ որակական առումով շատ էական է՝ համալրելու մակրո պատկերը: Կա գիտելիքի մեծ պակաս եվրոպական մակարդակում **ձեռնարկություններում և ընտրված առանցքային ոլորտներում հմտության և կարողության կարիքների որոշակման** ուղղությամբ: Cedefop-ը, խորհրդակցելով սոցիալական գործընկերների և շահագրգիռ այլ կողմերի հետ, կլրացնի այս բացը՝ իրականացնելով գործատուների հմտության ուսումնասիրության իրագործելիության հետազոտություն՝ որոշարկելու հմտության, կարողության և ուսուցման հետագա կարիքներն եվրոպական ձեռնարկություններում, ինչպես նաև վերլուծելով հմտության կարիքներն եվրոպական տնտեսության ընտրված առանցքային ոլորտներում:

Հետագայում Cedefop-ը կիրականացնի հետազոտություն **հմտության անհամապատասխանության** և դրա ազդեցության վերաբերյալ: Դրա արդյունքները կապահովեն նոր ըմբռնումներ հմտության անգործածելիության, ավելցուկային կրթության և հմտության պակասի մասին: Հետազոտությունը կդիտարկի հմտության անհամապատասխանության ազդեցությունն ու տևականությունը և այն միջոցները, որոնք կարելի է ձեռնարկել՝ կանխելու կամ մեղմացնելու աշխատաշուկայում առաջացող խեղաթյուրումները: Միջազգային համագործակցությունը ՏՀԶԿ-ի /OECD/ հետ կշարունակվի 2009թ. փետրվարին կայանալիք միջազգային համատեղ սեմինարով, որի օրակարգում կլինի աշխատանքային ընդհանուր հմտությունների չափագրումը, Մեծահասակների կարողությունների միջազգային գնահատման ծրագրի /ՄԿՄԳԾ, PIAAC/[40] աշխատանքային պահանջների մոտեցումի թռիչքային արդյունքների ներկայացումը:

**Ուսումնառության արդյունքները** դասավանդման, ուսուցման և ուսումնառության նորարարական մոտեցումների մի մասն են կազմում[41] և դիտարկում են՝ որպես դրանց արմատական փոփոխություն: Շեշտը դրվում է ուսումնառության արդյունքների սահմանման վրա՝ ձևավորելու ուսումնառուի փորձը՝ ելնելով այն առարկաների բովանդակությունից, որոնք ձևավորում են ուսումնական ծրագրեր: Ուսումնառության արդյունքները կենտրոնական տեղ են գրավում ՈԵՇ-ում և որակավորումների ազգային շրջանակներում, Europass-ում և ՄԿՈՒԵԿ-ում: Cedefop-ը հետամուտ կլինի անդամ պետությունների և սոցիալական գործընկերների միջև որակավորումների և ուսումնառության արդյունքների վերաբերյալ բանավեճի ծավալմանն ու փորձերի սիստեմատիկ փոխանակմանն այս հիմնախնդրի տարբեր ասպեկտները վերլուծող համեմատական մի շարք ուսումնասիրությունների միջոցով: Նախևառաջ, ի՞նչ ներգործություն են ունենում մասնագիտական և կրթական/ուսուցման չափորոշիչների սահմանումներն ու վերակազմավորումներն որակավորումների վրա, ինչպե՞ս կարելի է օգտագործել չափորոշիչները՝ բարելավելու աշխատաշուկայի և որակավորումների համակարգերի միջև կապերը: Երկրորդ, Եվրոպայում որակավորումների փոփոխվող դերակատարությունը, նրանց փոխհարաբերությունը ցկյանս ուսումնառության ու գլոբալիզացման հետ, և ինչպե՞ս ստեղծել որակավորումների համակարգեր և շրջանակներ: Երրորդ, կապն ուսումնառության արդյունքների, ՄԿՈՒ ուսումնական ծրագրերի և ուսումնառության ծրագրերի միջև: Չորրորդ, ՈԵՇ և ոլորտային որակավորումներ: 2009թ. մայիսին Cedefop-ը կկազմակերպի մեծ համագումար որակավորումների և ուսումնառության արդյունքների մասին՝ քաղաքականություն մշակողներին և շահագրգիռ կողմերին ներկայացնելու Եվրոպայում որակավորումների փոփոխվող դերակատարությանն առնչվող մի քանի ուսումնասիրությունների արդյունքները: Համագումարի նպատակն է նպաստել ազգային և եվրոպական մակարդակներում ցկյանս ուսումնառության համապարփակ ռազմավարության մշակմանը՝ ուսումնասիրելով ուսումնառության արդյունքների միջոցով որակավորումները սահմանելու և բնութագրելու ազդեցությունը:

Այս տեղեկատվությունը կաջակցի Եվրոպական Հանձնաժողովի աշխատանքային խմբին ուսումնառության արդյունքների ճանաչման գործում, որը համատեղ համակարգվում է Cedefop-ի կողմից: 2009թ. աշխատանքը կկենտրոնանա որակավորումների ազգային շրջանակների մշակմանն օժանդակելու և **ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության ճանաչման** համակարգերի իրագործման վրա՝ հիմնվելով 2004թ.-ին համաձայնեցված ընդհանուր սկզբունքների[42] և 2008թ.-ի աշնանն աշխատանքային խմբի կողմից ստեղծված եվրոպական ուղենիշների վրա: Եվրոպական Հանձնաժողովը, անդամ պետությունները և Cedefop-ը ճանաչման վերաբերյալ կպատրաստեն նոր նյութ[43]:

Cedefop-ի աջակցությունն եվրոպական **e-Հմտությունների երկարաժամկետ օրակարգի**[44] իրագործմանը կկենտրոնանա e-Կարողությունների շրջանակի, ՏՀՏ վկայագրման և որակավորումների, ինչպես նաև եվրոպական e-Հմտությունների և կարիերաների պորտալի վրա:



Cedefop-ը կշարունակի մշտադիտարկել **ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների դերակատարությունների և կարողությունների** վրա ներգործող միտումներն ու զարգացումները, որոնք հիշատակված են նաև Կոպենհագենի կոմյունիկեներում, Խորհրդի՝ ուսուցչի կրթության վերաբերյալ եզրակացությունում և Եվրոպական Հանձնաժողովի՝ 21-րդ դարի համար կարողությունների կատարելագործման վերաբերյալ զեկույցում[45]: Ուսուցիչներն ու դասընթացավարներն ունեն առանցքային դերակատարություն բարձրորակ կրթություն և ուսուցում ապահովելու համար: Cedefop-ը կաջակցի Եվրոպական Հանձնաժողովի՝ ՄԿՈՒ ուսուցիչներին և դասընթացավարներին առնչվող հիմնախնդիրներով զբաղվող խմբին և համատեղ կկազմակերպի համագումար ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների փոփոխվող կարողությունների վերաբերյալ: Cedefop-ը ձեռնամուխ կլինի ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների նոր դերակատարությունների ու կարողությունների վերաբերյալ բանավեճի ծավալմանը և քաղաքականության զարգացումներին ուսումնառության նոր հայեցակարգերում, մասնավորապես, կարողություններ, որոնք անհրաժեշտ են նրանց՝ իրագործելու ուսումնառության արդյունքների վրա հիմնված դիդակտիկ մոտեցումները: Cedefop-ը նաև կտարածի կարողությունների մի շարք շրջանակներ ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների համար, ինչպես նաև ներծառայողական դասընթացավարների մասնագիտական զարգացման վերաբերյալ լավագույն փորձի և քաղաքականությունների բանաքաղություն: Այն նաև հետամուտ կլինի ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների կարողությունների անհամապատասխանությանն ու նրանց շարունակական ուսուցման հնարավորություններին առնչվող ուսումնասիրությանը: Cedefop-ի՝ դասընթացավարների համացանցի ուսուցումը՝ ԴՈՒ համացանց /TTnet/, կշարունակի հանդիսանալ ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների մասնագիտական զարգացման վերաբերյալ փորձագիտության համաեվրոպական պլատֆորմ:

Cedefop-ը կսատարի **մեծահասակների ուսումնառության** եվրոպական քաղաքականության մշակմանը՝ որպես ցկյանս ուսումնառության ռազմավարության մի մաս՝ հետևելով Խորհրդի եզրակացություններին[46] և Եվրոպական Հանձնաժողովի գործողության պլանին[47]: Cedefop-ը կմշտադիտարկի և կգնահատի մեծահասակների ուսումնառության այնպիսի միտումներն ու քաղաքականության զարգացումները, ինչպիսիք են կրթության և ուսուցման մեջ մեծահասակների մուտքի հնարավորության և մասնակցության մեծացումը, մատակարարման որակի ամրապնդումն ու մեծահասակ բնակչության, հատկապես ռիսկային խմբերի որակավորումների նորացումը:

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 3

# Մասնագիտական կրթության և ուսուցման առավելությունների գնահատում



Չնայած իր ընդունած առավելությունների՝ հմտությունների մեջ հասարակության և մասնավոր ներդրումների շահույթների վերաբերյալ հետազոտությունը համեմատաբար թերի է զարգացած Եվրոպայում: Անկախ նրանից, որ կրթության առավելությունների մասին կան շատ ուսումնասիրություններ, քիչ բան է հայտնի ՄԿՈՒ ավելի հատկանշական ազդեցության մասին: Պատկերացումն այն մասին, թե ինչպես է ՄԿՈՒ-ն նպաստում կարիերայի և զբաղվածության հեռանկարներին, ինչպես նաև նրա ազդեցությունն արտադրողականության, ծեռնարկության կատարողականության, մրցունակության և սոցիալական ներգրավման վրա, էական է՝ իրազեկված լինելու ՄԿՈՒ ներդրման ընտրությունների մասին: Խորհրդի՝ կրթության և ուսուցման ոլորտում արդյունավետության և անաչառության վերաբերյալ եզրակացությունները կրթության և ուսուցման մեջ ներդրումների ազդեցության վերաբերյալ հետազոտության կոչ արեցին[48]:

ՄԿՈՒ տնտեսական և սոցիալական ուրույն առավելությունների մասին փաստեր ապահովելով՝ /համեմատած ուսումնառության այլ ուղիների հետ, որոնք նշված են **եվրոպական ՄԿՈՒ հետազոտության հինգերորդ զեկույցում՝ ՄԿՈՒ տնտեսական և սոցիալական առավելությունները,** որը պետք է տպագրվի և տարածվի 2011թ.-ին/ Cedefop-ը կլրացնի գիտելիքի պակասը: Cedefop-ը կվերլուծի առկա հետազոտությունը, կվերանայի տեսությունները, մեթոդներն ու տվյալները, կնախագծի և կֆինանսավորի մի նոր հետազոտություն՝ զարկ տալու ՄԿՈՒ շահույթների մասին նոր մակարդակի: Հետազոտությունը կշոշափի տնտեսական ու սոցիալական առավելությունները հասարակության, տնտեսական ոլորտների, ընկերությունների և անհատների համար: Այս աշխատանքը համալրելու և գիտլիքի փոխանակմանն աջակցելու համար Cedefop-ը կվերլուծի և կտարածի անդամ պետությունների, Իսլանդիայի և Նորվեգիայի ՄԿՈՒ ազգային հետազոտության առցանց զեկույցները:

**ՄԿՈՒ ֆինանսավորումն** առանցքային հիմնախնդիր է, իսկ ներդրումները մարդկային կապիտալում խիստ գերակայություն են համարվում[49]: Cedefop-ը կապահովի տեղեկատվություն ՄԿՈՒ ծախսերի մակարդակների, միտումների մասին՝ կենտրոնանալով ծախսերի բաշխման այնպիսի քաղաքականությունների և գործիքների վրա, ինչպիսիք են ոլորտային ուսուցման հիմնադրամները /որտեղ սոցիալական գործընկերներն ունեն առաջատար դերակատարություն/, անհատական ուսումնառության հաշվեկշիռները, վարկային ու հարկային արտոնությունները: Անդամ նոր պետություններում ՄԿՈՒ շահութաբեր գործիքները և ոչ ԵՄ երկրներում ՄԿՈՒ ֆինանսավորումը կլինի Cedefop-ի համագումարի թեման՝ համագործակցելով եվրոպական և միջազգային գործընկերների հետ: Cedefop-ը Բրյուսելում Եվրոպական Հանձնաժողովի հետ համատեղ կկազմակերպի համագումար կրթության և ուսուցման ծախսերից հարկերի գանձման համակարգի վերաբերյալ:

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 4

# Մասնագիտական կրթության և ուսուցման վարկանիշի բարձրացում



ՄԿՈՒ-ն աշխատանքային կյանքում ծերացող աշխատուժի բարձր կատարողականության և որակի հիմքն է հանդիսանում: Այնուամենայնիվ, այն չի վայելում համարժեք գնահատանք, ինչպես ընդհանուր կրթությունը, և նրա արժեքը ցկյանս ուսումնառության կենտրոնում թերի է գնահատված: ՄԿՈՒ, ընդհանուր և բարձրագույն կրթության միջև արգելապատերն ասես փոխանցվում են, քանի որ յուրաքանչյուր երկրի կրթության և ուսուցման առանձին համակարգերը վերակառուցվում են՝ դառնալու ցկյանս ուսումնառության մեկ ազգային համակարգ, որն արժևորում է ուսումնառության բոլոր տեսակները: Սա մարդկանց հնարավորություն կտա տեղաշարժվել ՄԿՈՒ և ընդհանուր կրթության միջև, և հակառակը, ուսումնառության բոլոր մակարդակներում՝ ներառյալ բարձրագույն կրթությունը:

ՄԿՈՒ վարկանիշի բարձրացումը պահանջում է հաղորդակցություն: **Cedefop-ի հաղորդակցությունների քաղաքականությունը** կոչված է՝ տարածելու հստակ, վստահելի, յուրաժամ և, եթե հնարավոր է, համեմատելի տեղեկատվություն՝ հաստատելով հավասարություն քաղաքականություն մշակողների, ինչպես նաև սոցիալական գործընկերների տեղեկատվության հատուկ կարիքների միջև և գործել՝ որպես տեղեկատվության բաց աղբյուր հետազոտողների, պրակտիկայի գործընթացում գտնվողների և ՄԿՈՒ լայն հանրության համար:

Cedefop-ը վերաձևավորում է հաղորդակցման իր ծառայությունները՝ դրանք համապատասխանեցնելու 2009-11թթ. իր նոր գերակայություններին: Հետևելով արտաքին գնահատման երաշխավորություններին՝ Cedefop-ը[50] շարժվում է դեպի ազդեցությամբ շարժվող ռազմավարություն՝ շեշտը դնելով ինտերնետի վրա հիմնված պրոդուկտների և թվային հրատարակությունների վրա՝ ավելի լավ բավարարելու թիրախային խմբերի կարիքները:

2009թ. ընթացքում Cedefop-ը կստեղծի իր վեբ պորտալը՝ www.cedefop.europa.eu: Պորտալը կունենա տեղեկատվության նոր համակարգեր և կապահովի գրանցման եզակի հատված՝ ունենալու մուտքի հնարավորություն Cedefop-ի բոլոր վեբ ծառայություններ՝ ներառյալ.

(ա) տեղեկատվություն Cedefop-ի գործողությունների և գործունեության մասին,
(բ) նախագծեր ու համացանցեր և Cedefop-ը՝ որպես կազմակերպություն,
(գ) նորություններ ուսուցման զարգացումների մասին /քաղաքականության համառոտ գրառումներ, տեղեկագիր, մամլո հաղորդագրություններ/,
(դ) Cedefop-ի տվյալների բազա /բիբլիոգրաֆիական տվյալների բազա, եվրոպական առցանց ուսուցման շտեմարան, Եվրոպայի ՄԿՈՒ համակարգերի մասին տեղեկատվություն, հետազոտություն, վիճակագրություն և ցուցիչներ/,
(ե) Cedefop-ի գրախանութ,
(զ) առաջիկա համագումարներ, միջոցառումներ, աշխատաժողովներ և սեմինարներ,
(է) մուտքի հնարավորություն Europass և ուսումնական այցերի կայքէջեր:

Cedefop-ը կհաղորդի ՄԿՈՒ վերաբերյալ գլխավոր հաղորդագրությունները շահագրգիռ կողմերին և զանգվածային լրատվամիջոցներին /ներառյալ տեղական և եվրոպական լրագիրները, ռադիոն և հեռուստատեսությունը/ սիստեմատիկ տեղեկատվության միջոցով կոշտ և էլեկտրոնային ձևաչափերում: Այն կապեր կհաստատի եվրոպական լրագրողների, մամլո գործակալությունների, Եվրոպական Հանձնաժողովի մամլո ծառայությունների հետ և կթողարկի երկշաբաթյա մամլո հաղորդագրություններ: Cedefop-ը կշարունակի թողարկել բարձրորակ հրատարակություններ, որոնք կնպաստեն նրա ճանաչմանը՝ որպես ՄԿՈՒ մասին վստահելի, համապատասխան և օգտակար տեղեկատվության աղբյուր թիրախային տարբեր խմբերի և հիմնական շահագրգիռ կողմերի համար:



Cedefop-ը կաջակցի ՄԿՈՒ փորձագետների մուտքի հնարավորությանը գրականություն՝ պահպանելով Եվրոպայում ՄԿՈՒ մասին կոշտ և առցանց նյութերի համապարփակ հավաքածուն՝ բիբլիոգրաֆիական տվյալների բազայում մոտավորապես 60 000 հղումներով: Cedefop-ի տեղեկատու ծառայությունը բաց է՝ պատասխանելու ՄԿՈՒ վերաբերյալ Cedefop-ի շահագրգիռ կողմերից հնչած հարցերին և հարցադրումներին: Տարվա ընթացքում Cedefop-ն ակնկալում է ստանալ և պատրաստել շնորհանդեսներ ամբողջ Եվրոպայի մոտ 3 000 փորձագետների և այցելուների համար՝ օգնելով, որպեսզի Սալոնիկն եվրոպական ՄԿՈՒ քաղաքականության համար դառնա էական վայր:

2009թ.-ին Cedefop-ը կհրատարակի ***Մասնագիտական ուսուցման եվրոպական հանդեսի*** երեք համար միայն անգլերեն լեզվով, որոնցից երկուսը կլինեն թեմատիկ.

(ա) Համար 46 (I/2009), բարձրագույն կրթության և ՄԿՈՒ մասին,
(բ) Համար 47 (II/2009), ընդհանուր հիմնախնդիրներ,
(գ) Համար 48 (III/2009), ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության գնահատման, ճանաչման և վկայագրման մասին:

Այնուամենայնիվ, 2009 թվականն անցումային տարի է հանդեսի համար, և հունիսին Կառավարման Խորհուրդը կվճռի նրա ճակատագիրը: Սա իրականացնելու համար Կառավարման Խորհուրդը կվիճարկի մի քանի կարևոր գործոններ: Այն կդիտարկի եվրոպական հանդեսի անհրաժեշտությունը Cedefop-ի նոր հաղորդակցությունների քաղաքականության համատեքստում, որոնք ստեղծվել են՝ ծառայելու եվրոպական ՄԿՈՒ քաղաքականության զարգացման մեջ իր աճող դերակատարությանը և վերջինից բխող նոր պահանջարկներին: Այն նաև կդիտարկի եվրոպական հանդեսը հրատարակել շարունակելու համար պահանջվող ռեսուրսներին առնչվող այլընտրանքներն ու սպասվող հետևանքները: Հաշվի առնելով վերոնշյալ հիմնախնդիրները՝ Կառավարման Խորհուրդը կվճռի, թե ինչ հիմքերով է իրագործելի և շահութաբեր շարունակել հանդեսի հրատարակումը կամ դադարեցնել այն՝ ռեսուրսներն օգտագործելով այլ գործընթացների համար:

# Կառավարում, ռեսուրսներ և ներքին վերահսկում

**Գործերի արդյունավետ կառավարումն** ունի անուղղակի, սակայն շատ էական ներդրում Cedefop-ի գործող նպատակներին հասնելու համար: Այն օգնում է զարգացնել, ձևավորել և ղեկավարել կազմակերպության հմտությունները, ինչպես նաև պահպանում է ֆիզիկական միջավայրը և ՏՏՏ-ն, որով աշխատում են գործընկերները, և աջակցում է նրանց հայթայթման, պայմանագրային և ֆինանսական ընթացակարգերում: Բացի այդ, արտերկրյա կազմակերպությունների և կապալառուների հետ առնչվելիս այն ուրվագծում է Cedefop-ի պատկերը: Cedefop-ն իր առջև նպատակ է դրել գնալ ընդառաջ դեպի որակի կառավարում իր մարդկային և ֆինանսական ռեսուրսները ղեկավարելիս: 2009թ.-ին Cedefop-ը ծեռնամուխ կլինի վարչական փոփոխությունների, որոնք գալիս են անցյալ տարիներից: Օգտագործելով արտաքին ու ներքին աուդիտների, նախնական և ներքին գնահատումների արդյունքները, ինչպես նաև կիրառելով կառավարման ժամանակակից տեխնիկաներ, համաձայն կանոնակարգերի՝ գերակայությունը կտրվի արդյունավետությունը բարձրացնելուն՝ արդիականացնելով ընթացակարգերը, պլանավորումն ու թղթակցությունը:

Ներքին Աուդիտի Ղեկավարությունը կշարունակի խրախուսել տնօրենին՝ վերահսկելու ռիսկերն ու մշտադիտարկելու համապատասխանությունը՝ աուդիտների և լուծմանը միտված խորհրդատվության միջոցով, որոնք նախագծված են՝ բարելավելու Cedefop-ի գործողությունները:

Հետագայում Cedefop-ը կկատարելագործի իր **պլանավորումն ու թղթակցությունը:** Այս զարգացումներն ուղղորդվում են նպատակներով՝ ստեղծելու կատարողականության մշտադիտակման արդյունավետ և համապարփակ համակարգ, բարելավելու կառավարման մասին տեղեկատվության պարբերական թողարկումը՝ ներառյալ ծրագրի կառավարիչներ՝ երաշխավորելով գործարարությանն առնչվող գործընթացների լավ փաստաթղթավարություն: Cedefop-ը մշակել է ցուցիչների մի շարք և վավերացման աղբյուրներ՝ չափագրելու իր կատարողականությունը և ներգործությունը 2009-11թթ. ընկած ժամանակահատվածում: Այս ցուցիչները ներկայացնում են Cedefop-ի տարբեր գործողություններից ակնկալվող ազդեցության միավորումը, համախմբումը: Այս աղբյուրները կմշտադիտարկվեն և կվերլուծվեն՝ ապահովելու Cedefop-ի կատարողականության գնահատումը:

2009թ.-ին Cedefop-ի՝ **գործողությունների վրա հիմնված բյուջեն** (ABB) կօգտագործվի բյուջետային պլանավորման, մշտադիտարկման և թղթակցության համար: Ընթացակարգերի ավտոմատացումը կշարունակվի, իսկ արդյունավետությունը կկատարելագործվի՝ իրականացնելով թվով քիչ, սակայն մեծ ծավալների առաջարկներ ներկայացնող ընթացակարգեր:

Cedefop-ի միասնական պատկերն ամբողջացնելու համար անհրաժեշտ է 2009թ.-ին ստեղծել Cedefop-ի կայքէջի նոր ձևավորում, Cedefop-ի տարբեր կայքէջերը միակցել գործող մեկ պլատֆորմի մեջ: Այն կորդեգրի կամ կվերածևավորի ինտերնետ-հավելվածներ՝ կիրառելու Microsoft.NET տեխնոլոգիան՝ որպես զարգացումն իրականացնող պլատֆորմ: Cedefop-ը նաև կկիրառի RedDot տեխնոլոգիան վեբ բովանդակության կառավարման համար, ինչպես նաև կվերափոխի համագումարների իր համակարգերի ենթակառուցվածքը: Ինչ վերաբերում է շինությանը, ապա դրա անվտանգությունն ապահովող աշխատանքները կլինեն ընթացքի մեջ:



## Աշխատանք գործընկերության միջոցով

ՄԿՈՒ-ն բարելավելու համար Cedefop-ը գործընկերություն է ծավալել բազմաթիվ կազմակեպություններիի հետ, որոնցից յուրաքանչյուրն իր փորձագիտությունն է հրամցնում: ՄԿՈՒ քաղաքականության մեջ Cedefop-ի հիմնական գործընկերներն են Եվրոպական Հանձնաժողովը, անդամ պետությունները և սոցիալական գործընկերները: Սոցիալական գործընկերությանը, աշխատանքային հարաբերություններին ու ՄԿՈՒ-ին առնչվող հիմնախնդիրներով Cedefop-ը փորձագիտությունը փոխանակում է Եվրոհիմնադրամի /Կենցաղի և Աշխատանքային Պայմանների Բարելավման Եվրոպական Հիմնադրամ, տե՛ս Հավելված VI/, իսկ տեղեկատվությունը ԵԿՀ-ի հետ /ETF, Եվրոպական Կրթական Հիմնադրամ, տե՛ս հավելված V/՝ թեկնածու երկրներին ինտեգրելու եվրոպական ՄԿՈՒ քաղաքականության գործընթացի մեջ: Սերտորեն համագործակցելով Եվրոպական Հանձնաժողովի հետ՝ Cedefop-ը գործակցում է Կրթության և Ցկյանս Ուսումնառության Հետազոտության Կենտրոնի հետ /CRELL/՝ աշխատելով կրթության և ուսուցման հենանիշերի ու ցուցիչների վրա՝ խրախուսելու քաղաքականության մշակմանը: Cedefop-ը նաև կաշխատի ՄԿՈՒ որակի ապահովման համացանցի /ՄԿՈՒ-ՈԱԵՑ/ և եվրոպական ցկյանս ուղղորդման քաղաքականության համացանցի հետ: Ընդհանուր կրթության և ՄԿՈՒ հետ նրա աճող կապերի զարգացումներին Cedefop-ը հետևում է Eurydice-ի /Եվրոպական Կրթական Համացանց/ միջոցով: Ելնելով ՄԿՈՒ իսկ շահերից՝ այն ձգտում է ռազմավարական գործընկերություններ հաստատել ԵՄ այնպիսի գործակալությունների հետ, ինչպիսիք են Աշխատանքային Առողջապահության և Անվտանգության Եվրոպական Գործակալությունը /OSHA/, միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են OECD-ն /Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպություն/, UNEVOC-ը, ILO-ն /Աշխատանքի Միջազգային Կազմակերպություն/ և ՄԿՈՒ հետազոտական հաստատություններն ոչ ԵՄ երկրներում:

Cedefop-ի համացանցերը /տե՛ս Հավելված IV/ հզոր գործիքներ են՝ հավաքագրելու և տարածելու տեղեկատվությունը, փոխանակելու փորձը, խթանելու բանավեճը և ծնելու նոր գաղափարներ: Cedefop-ի գլխավոր համացանցերը ներառում են.

**ReferNet**-ը /ՄԿՈՒ տեղեկատվական և փորձագիտական եվրոպական համացանց/ Cedefop-ի՝ անդամ պետություններում ՄԿՈՒ համակարգերի և քաղաքականության մշակման մասին տեղեկատվության առաջնային աղբյուրն է, որը Cedefop-ին տրամադրում է տվյալներ փաստաթղթաբանության գործընթացների համար և օժանդակում է տարբեր ծրագրերին՝ ներառյալ ԵՄ-ում ՄԿՈՒ-ին առնչվող քաղաքականության զեկուցումը և հետազոտության գործընթացները: Այն նաև խրախուսում է Cedefop-ի հաղորդակցման ռազմավարությանը՝ ազգային մակարդակում տեղեկատվություն տրամադրելով և տարածելով: ReferNet-ը բաղկացած է ազգային կոնսորցիումներից, որոնց կազմում ընդգրկված են յուրաքանչյուր անդամ պետության ՄԿՈՒ կազմակերպությունների ներկայացուցիչներ, իսկ վերջիններիս ուղղորդում է ազգային համակարգողը,

**SkillsNet**-ը /Հմտության կարիքների վաղ որոշարկման համացանց/ միավորում է տարբեր ոլորտների փորձառու հետազոտողներին և այլ փորձագետներին՝ ներկայացնելու և քննարկելու հմտության կարիքների կանխորոշման համար սահմանված վերլուծության մեթոդներն ու արդյունքները, ինչպես նաև եվրոպական և միջազգային մակարդակներում աշխատաշուկայում առկա հմտությունների երկարաժամկետ հեռանկարների համար ստեղծվող միջոցները:

**Դասընթացավարների ուսուցման համացանցն** /TTnet/ օժանդակում է ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների մասնագիտական զարգացմանը, որոնք ունեն առանցքային դերակատարություն ՄԿՈՒ որակի ու արդիականացման համար: TTnet-ը տրամադրում է քաղաքականության երաշխավորություններ, ուղղորդում և գործիքներ: Այն բաղկացած է ՄԿՈՒ ուսուցիչներին և դասընթացավարներին վերապատրաստող պետական և մասնավոր հատվածի գլխավոր կազմակերպությունների 21 ազգային համացանցերից:



## Ռիսկի Գնահատում

Գոյություն ունեն 2009թ. աշխատանքային ծրագրին սպառնացող մի շարք բյուջետային, քաղաքականության և գործող ռիսկեր:

Բյուջետային հետագա կրճատումները կարող են ազդեցություն ունենալ անձնակազմի և գործընթացների վրա:

Քաղաքականության ռիսկերը կարող են հանգեցնել անորոշության կամ փոփոխությունների՝ ազդելով Cedefop-ի աշխատանքի որակի, համապատասխանության և հետևանքների վրա: Քաղաքականության ռիսկերը Cedefop-ի վերահսկման սահմաններից բավական դուրս են, սակայն, սերտորեն համագործակցելով գործընկերների հետ, նրա նպատակն է որոշարկել հնարավոր խնդիրները, որքան հնարավոր է շուտ և գտնել դրանց լուծումները: Քաղաքականության ռիսկերը ներառում են՝

(ա) փոփոխություններ Եվրոպական Հանձնաժողովի, անդամ պետությունների և սոցիալական գործընկերների ՄԿՈՒ-ին առնչվող քաղաքականության գերակայություններում,

(բ) նոր պահանջարկներ՝ ստանձնելու հավելյալ պատասխանատվություններ, որոնք կարող են սպառել ռեսուրսները և սահմանափակել Cedefop-ի աշխատանքի արդյունքները,

(գ) տարբեր ակնկալիքներ Cedefop-ի աշխատանքից Կառավարման Խորհրդի և շահագրգիռ կողմերի շրջանում, որոնք կարող են հիասթափության պատճառ դառնալ վերջնական արդյունքների, նվազած հետևանքների և այն կարծիքի առումով, որ ռեսուրսները փոշիացվել են, իսկ հնարավորությունները՝ բաց թողնվել,

(դ) շահագրգիռ կողմեր, որոնք ունակ չեն ցուցաբերել բավականաչափ նվիրում Cedefop-ի համացանցերին և աշխատանքային խմբերին,

(ե) կողմնակալություն ընդհանուր կրթության նկատմամբ, որը ստվերում է թողնում ՄԿՈՒ հիմնախնդիրները:

Գործող ռիսկերը կարող են ծգծգել աշխատանքը և թուլացնել վերջինիս որակն ու ազդեցությունը: Cedefop-ն որոշ ռիսկերի վրա ունի վերահսկման բարձր մակարդակ: Այն կարողանում է ղեկավարել դրանք պլանավորման, հստակ ընթացակարգերի, ներքին վերահսկումների և, հարկ լինելու դեպքում, լայն տարածման ու մարկետինգի միջոցով:

Գործող ռիսկերը ներառում են՝

(ա) այլ ներքին քաղաքականություններ /հաղորդակցություններ, ՏՏ, անձնակազմ, ֆինանսական և վարչական/, որոնք դասակարգված չեն՝ ի շահ Cedefop-ի առանցքային գործունեության,

(բ) անարդյունավետ հաղորդակցություն շահագրգիռ կողմերի հետ,

(գ) աշխատանքի պահանջներին բավարարելու անընդունակ անձնակազմի բարձր մակարդակ,

(դ) արտաքին կապալառուների, գործընկերների ներկայացրած փաստաթղթերի անհաջող տենդերներ, ծգծգումներ և վատ որակ,

(ե) Եվրոպական Հանձնաժողովի ծառայությունների ռեսուրսների կամ այլ ճնշումներ. նրանք ունեն ծառայողական մակարդակի փոխադարձ համաձայնություններ Cedefop-ի հետ, որոնք ազդում են վարչական առաջադրանքների վրա, օրինակ՝ ուսուցում, EPSO մրցույթներ, ֆինանսական նոր ծրագիր (ABAC), հրատարակություններ Հրատարակչության Գրասենյակի միջոցով:

# Գործողությունների գծապատկեր

ՈՒՐՈՒՅՆ ՆՊԱՏԱԿ
Ծանուցում եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականությունների մասին

## Գործողություն՝ Քաղաքականության վերլուծություն

**Քաղաքականության վերլուծության նպատակն է իրականացնել ՄԿՈՒ քաղաքականության առաջընթացի համեմատական և համատեքստին համապատասխանեցված վերլուծություն և ծանուցել քաղաքականության գլխավոր հատվածների զարգացումների մասին՝ մասնավորապես նկատի ունենալով ԵՄ քաղաքականության նպատակները ՄԿՈՒ համար՝ սահմանված կոպենհագենյան գործընթացում:**

Համաձայն Հելիսինկիի և Բորդոյի Կոմյունիկեներում Cedefop-ին տրված հանձնարարագրի՝ գործողության նպատակն է մշտադիտարկել և վերլուծել Կոպենհագենի նպատակներն իրագործելու մեջ անդամ պետությունների գրանցած առաջընթացն ու կատարողականությունը, ինչպես նաև եվրոպական ՄԿՈՒ համակարգերի արդիականացման գերակայությունները՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական արագ տեղի ունեցող զարգացումները, ինչպես նաև քաղաքականության այլ հատվածների հետ կապերը:

### Գործողության հետևանքային ցուցիչներ

Քաղաքականության զեկույցը և 2009թ. Agora /հավաքատեղի/ համագումարը կկարողանան հաղորդել տեղեկություն քաղաքականության զարգացումների և ՄԿՈՒ համակարգերի արդիականացման մասին: Ցույց տալով լավագույն փորձի օրինակներն ու ՄԿՈՒ զարգացումները գլոբալ հեռանկարում՝ քաղաքականություն մշակողներն ու հասարակությունը ավելի շատ են իրազեկվում ՄԿՈՒ հնարավորությունների և սոցիալ-տնտեսական լայն համատեքստում նրա մարտահրավերների մասին:

Բացի այդ, Cedefop-ի քաղաքականության մասին զեկույցի արդյունքները, որը բաղկացած է նաև ազգային զեկույցների համեմատական վերլուծությունից և երկրների ինքնագնահատումից, հանդիսանում են ամենահամապատասխան աղբյուրները փաստերի վրա հիմնված եվրոպական ՄԿՈՒ քաղաքականության, ինչպես նաև Կոպենհագենի գործընթացում հետագա քայլերի և գերակայությունների վերաբերյալ որոշումների համար:

Cedefop-ի հրատակություններն և փորձագիտությունը լայնածավալ կիրառվում են նաև ԵՄ տարբեր փաստաթղթեր /օր.՝ ծանուցումներ, համատեղ զեկույցներ, առաջընթացի զեկույցներ/, միջոցառումներ և ԵՄ, ազգային մակարդակներում աշխատանքային խմբեր պատրաստելու համար, ինչպես եղավ 2008թ.-ին /օր.՝ ճեպազրույցներ, նախարարական հանդիպումներ, Բորդոյի Կոմյունիկեի պատրաստում/:

Նախագիծ 1. **ՄԿՈՒ քաղաքականության զեկուցում**
Կոպենհագենյան գործընթացի շրջանակներում ՄԿՈՒ ոլորտում առաջընթացի մշտադիտարկում և վերլուծում, ինչպես նաև Հելսինկիի և Բորդոյի Կոմյունիկեներին հետևող գործողություններ:

Ելքային ցուցիչներ 2009

Հրատարակություններ

- 2008թ. Կոպենհագենի գործընթացի քաղաքականության զեկույց՝ պատրաստ 2009թ. մարտի Agora /հավաքատեղի/-ի համար մի քանի լեզուներով Cedefop-ի գլխավոր գործընկերների և քաղաքականություն մշակողների/շահագրգիռ կողմերի համար /1-ին կիսամյակ, կատարելագործված տարածման ռազմավարություն/
- Առցանց տեղակայված ազգային զեկույցներ ՄԿՈՒ քաղաքականության զարգացումների մասին /անգլերեն լեզվով/՝ ստացված ReferNet-ի կողմից /1-ին կիսամյակ/: Զեկույցներից մի քանիսը հասանելի կլինեն մայրենի լեզուներով ReferNet-ի անդամների կողմից

---

### Համագումարներ և հանդիպումներ

Agora /հավաքատեղի/ համագումար 2009թ. մարտին Cedefop-ի գլխավոր գործընկերների և ազգային շահագրգիռ կողմերի համար՝ ներկայացնելու և քննարկելու վերլուծության արդյունքներն ու դրան հետևող քայլերը՝ համագործակցելով Չեխիայի Նախագահության հետ:

### Այլ առանցքային ելքատվյալներ

- Կոպենհագենի նպատակներն ու գերակայություններն իրագործելու առաջընթացը վերլուծվում և ներկայացվում է համեմատական եղանակով տարբեր առիթներում և միջոցառումներում՝ նկատի ունենալով սոցիալ-տնտեսական լայն համատեքստը, պատրաստվում են օժանդակող փաստաթղթեր և շնորհանդեսներ լայն տարածման համար
- Մոտեցման տեղայնացում զեկուցման հետագա գործընթացների մեջ
- Զեկուցման հաջորդ գործողության պատրաստում, որի արդյունքները կներկայացվեն Բելգիայի Նախագահության ընթացքում (II/2010), և դրա համապատասխանեցում Բորդոյի Կոմյունիկեում համաձայնեցված հետագա կարիքներին ու գերակայություններին
- Օժանդակություն EAC DG զեկուցման գործընթացներին Կրթություն և Ուսուցում 2010 աշխատանքային ծրագրի համատեքստում /ինչպես արվել է անցյալ տարիներին/
- Համագործակցություն DGVT-ի, ACVT-ի, ETCG-ի և այլ մարմինների ու կոմիտեների հետ եվրոպական քաղաքականության տարբեր փաստաթղթերի ու զեկույցների ձևավորման գործընթացում

---

## Նախագիծ 2. Ծանուցում ՄԿՈՒ ազգային համակարգերի մասին

Մշակել և տարածել ՄԿՈՒ ազգային համակարգերի և զարգացումների մասին համեմատական թեմատիկ տեղեկատվություն՝ հավաքագրված ReferNet-ի կողմից: ՄԿՈՒ ազգային համակարգերի մասին տվյալների առցանց բազան (eKnowVet) հասանելի է լայն հասարակության համար և այն կարելի է կիրառել և՛ խաչաձև ազգային, և՛ թեմատիկ մինքի վրա՝ հեշտացնելու համեմատությունը: Եվրոպական Հանձնաժողովի և Eurydice-ի միջև գործակցությունը կշարունակվի:

Ելքային ցուցիչներ 2009

---

### Հրատարակություններ

Տարվա ընթացքում անդամ պետություններում վերջին զարգացումների և ՄԿՈՒ թեմաների մասին առցանց տեղադրվող համեմատական զեկույցներ /անգլերեն լեզվով/: Զեկույցներից մի քանիսը հասանելի կլինեն մայրենի լեզվով ReferNet-ի կայքէջերում

---

### Համագումարներ և հանդիպումներ

---

### Այլ առանցքային ելքատվյալներ

Աշխատանքային խմբի ստեղծում՝ քննարկելու փաստաթղթերի ներկայացման և վերանայման ընթացակարգի զեկույցների և վերաքննության կառուցվածքը

## Գործողություն՝ ReferNet /ՄԿՈՒ տեղեկատվական և փորձագիտական եվրոպական համացանց/

ReferNet-ը մի համացանց է՝ ձեռք բերելու և տարածելու անդամ պետություններում, Նորվեգիայում և Իսլանդիայում ՄԿՈՒ զարգացումների մասին տեղեկատվությունը: Նրա գործողությունները կրում են փոխշահավետ բնույթ երկրների և Cedefop-ի համար: ReferNet-ը ՄԿՈՒ համակարգերի, քաղաքականությունների և հետազոտության մասին տեղեկատվության առաջնային աղբյուրն է, որը ծառայում է Cedefop-ի մի քանի գործընթացներին: ReferNet-ը նաև տեղեկատվություն է ապահովում անդամ պետություններում հրատարակությունների, համագումարների, ՄԿՈՒ վերջին զարգացումների և նախաձեռնությունների մասին: Եվ վերջապես, համացանցն ակտիվորեն տարածում է Cedefop-ի աշխատանքը:

### Գործողության հետևանքային ցուցիչներ

ReferNet-ի կողմից հավաքագրված և վերլուծված ենթարկված տեղեկատվության օգտագործումը Cedefop-ի մի քանի գործողությունների համար, ինչպես նաև համեմատական արդյունքների հասանելի դարձնելը լայն լսարանի համար նպաստում են՝ ավելի լավ ծանուցելու քաղաքականություն մշակողներին և հասարակությանն եվրոպական ՄԿՈՒ համակարգերի, զարգացումների, քաղաքականության նախաձեռնությունների, ինչպես նաև հետազոտության մասին: ReferNet-ի օգնությամբ Cedefop-ի արդյունքներն ու ելքային տվյալներն ավելի լավ են տարածվում անդամ պետություններում:

Ելքային ցուցիչներ 2009

#### Հրատարակություններ

#### Համագումարներ և հանդիպումներ

- Համացանցի պլենար նիստ 2009թ. աշնանը
- Ազգային կոնսորցիումի հանդիպում տարվա ընթացքում
- Ազգային համացանցերի տարածաշրջանային հանդիպումներ տարվա ընթացքում
- Հանդիպումներ ReferNet-ի առանցքային խմբի հետ տարվա ընթացքում

#### Այլ առանցքային ելքատվյալներ

- 2010թ. աշխատանքային ծրագիրը կկազմվի 2009թ. առաջին կեսին և կլինի հատուկ գրանտային համաձայնագրերի օբյեկտ, որը պետք է եզրափակվի տարվա վերջում
- Ազգային հետազոտության զեկույցներ՝ Cedefop-ին տրամադրված 2009թ. սեպտեմբերին
- ՄԿՈՒ համակարգի նկարագիր 2009թ. մայիսի վերջին
- ՄԿՈՒ-Bib-ի մշակում /ամենամսյա/
- ՄԿՈՒ քաղաքականության վերջին զարգացումների և նոր նախաձեռնությունների մասին նորությունների տրամադրում /առնվազն տարին 3 անգամ/
- Ազգային ReferNet կայքէջի պահպանում և նորացում /շարունակական/
- ՄԿՈՒ քաղաքականության վերջին զարգացումների և նախաձեռնությունների մասին նորությունների/մամլո հաղորդագրությունների տարածում /ամենամսյա/
- Ազգային համագումարների, սեմինարների և աշխատաժողովների մասին տեղեկատվության ապահովում /տարին երկու անգամ/
- Կոնտակտների ապահովում մամուլին /տարին երկու անգամ/

## Գործողություն՝ ՄԿՈՒ հետազոտություն

Գործողության նպատակն է վերանայել, վերլուծել ՄԿՈՒ հետազոտությունն ու առնչվող ոլորտները և ծանուցել դրանց մասին՝ ներառյալ տնտեսության և աշխատաշուկայի հետ կապերը, նախաձեռնել նոր հետազոտություն, որը կարող է հարթել գիտելիքին վերաբերող խոչընդոտները, խթանել համագործակցությունն ու հետազոտության փոխանակումը, ինչպես նաև ամրապնդել

**հետազոտողների, քաղաքականություն մշակողների և պրակտիկայում գտնվողների միջև հաղորդակցությունն ու ցանցավորումը:**

Սույն գործողության նպատակն է վերլուծել, վերանայել և համատեքստին համապատասխանեցնել ՄԿՈՒ արդիականացման վերաբերյալ ՄԿՈՒ ընթացիկ հետազոտությունն Եվրոպայում և շահագրգիռ կողմերին ու լայն հասարակությանը տրամադրել հետազոտության եզրակացություններն ու վիճակագրական տվյալները, որոնք անհրաժեշտ են և կարող են սատարել փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակմանը:

### Գործողության հետևանքային ցուցիչներ

Քաղաքականություն մշակողներն ու շահագրգիռ այլ կողմերը տեղեկացված են ՄԿՈՒ արդիականացման վերաբերյալ հետազոտության եզրակացությունների, ինչպես նաև քաղաքականություն մշակելու գործում նրանց ունեցած կարևորության դերակատարության մասին:

Եվրոպայում ձեռնարկությունների ուսուցման ձևաչափերի և տարեց աշխատողների աշխատելու ու սովորելու դրսևորման վերլուծությունը ստիպում է անդրադարձ կատարել համապատասխան այն ջանքերին, որոնք անհրաժեշտ են՝ նպաստելու շարունակական մասնագիտական ուսուցմանը:

Cedefop-ի փորձագիտությունը ՄԿՈՒ հետազոտությունում և ՄԿՈՒ միջազգային վիճակագրությունում ձևավորվում է տարբեր միջոցառումներում շահագրգիռ հիմնական անձանց և աշխատանքային խմբերի կողմից, ինչպես արդեն իսկ արվել է անցած տարիներին /օր.՝ մասնակցություն Eurostat-ի աշխատանքային խմբերում և հանձնախմբում, ԵՄ և ՏՀԶԿ (OECD) փորձագիտական խմբերում կամ հետազոտական տարբեր համագումարներում ու սեմինարներում/:

---

## Նախագիծ 1. Մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում

*ՄԿՈՒ հետազոտության վերաբերյալ 4-րդ զեկույցը՝ Մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում,* քննում է ՄԿՈՒ քաղաքականության՝ կոպենհագենյան գործընթացում համաձայնեցված առաջնային գերակայությունները և դիտարկում է դրանք ավելի լայն համատեքստում: Զեկույցը վերանայում է ծերացող աշխատուժի հետ կապված զարգացումները, ձեռնարկությունների՝ սովորելու և նորարարելու կարիքը, ինչպես նաև սոցիալական համախմբվածությունը մեծացնելու և սոցիալական մերժումը կրճատելու նպատակը: Այն նաև ուսումնասիրում է, թե ինչպես են ՄԿՈՒ համակարգերն արդիականանում՝ ի պատասխան այս ճնշումների և կոպենհագենյան գործընթացում սահմանված գերակայությունների: Սա իր մեջ ներառում է ՄԿՈՒ մեջ քվով ավելի շատ մարդկանց ներգրավումը, ուսումնառության արդյունքների վրա հիմնված որակավորումների համակարգերի ու շրջանակների իրագործումը, ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների մասնագիտական զագացումը, ուղղորդման ու խորհրդատվության կատարելագործումը՝ օգնելու մարդկանց ծավալել կարիերա:

Ելքային ցուցիչներ 2009

---

### Հրատարակություններ

- «Մասնագիտական Կրթության և Ուսուցման Արդիականացում» ՄԿՈՒ հետազոտության վերաբերյալ չորրորդ սինթեզ-զեկույց /2-րդ կիսամյակ/՝ հիմնված հետազոտողների բնօրինակ զեկույցների վրա, որոնք հրատարկվել են 2008թ.-ին
- Թռուցիկ և սեղմագիր լայն տարաբաշխման համար /2-րդ կիսամյակ/

---

### Համագումարներ և հանդիպումներ

---

### Այլ առանցքային ելքատվյալներ

- Հետազոտության որոշակի եզրակացությունները վերլուծվում են համեմատական ու համատեքստին համապատասխանեցված եղանակով և հրատարակվում են առանձին, եթե հարմար է
- Արդյունքների ակտիվ տրամադրում լրատվամիջոցներին, Cedefop-ի շահագրգիռ կողմերին արտաքին համագումարներում և հանդիպումներում

---

**Նախագիծ 2. Տարեց աշխատողների աշխատանք և ուսումնառություն**

Իրականացնել ընթացիկ հետազոտության և զարգացումների վերլուծություն՝ ապահովելու նոր պատկերացումներ տարեց աշխատողների, ինչպես նաև ծերացողների ու աշխատողների կատարողականության և ուսումնառության դրսևորման միջև փոխհարաբերությունների մասին, խրախուսելու ծերացման մասին փաստերի վրա հիմնված ակտիվ քաղաքականություններին:

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

Տարեց հասակում աշխատելու և սովորելու մասին ընթերցարան /գիրք/, որը կներառի 2008թ. սեպտեմբերին տեղի ունեցած աշխատաժողովի գործընթացը /2-րդ կիսամյակ/

### Համագումարներ և հանդիպումներ

### Այլ առանցքային ելքատվյալներ

Նախաձեռնել հետազոտական նախագիծ, որն արծագանքում է տարեց աշխատողների ուսումնառության դրսևորմանն ու աշխատանքային կատարողականությանը նյարդաբանական և ուսումնական տեսանկյունից, ինչպես նաև սինթեզել այս թեմայի վերաբերյալ հետազոտության այլ ուղղությունները

**Նախագիծ 3. Վիճակագրություն և ցուցիչներ**

Օժանդակել ՄԿՈՒ ոլորտում փաստերի վրա հիմնված քաղաքականությանն ու փորձին՝ ապահովելով վիճակագրական փաստեր ՄԿՈՒ-ին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ, աջակցել վիճակագրական գործընթացներին եվրոպական և միջազգային մակարդակներում, զարգացնել որակը, մեթոդներն ու տվյալների հավաքագրումը:

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

Ձեռնարկություններում եվրոպական շարունակական մասնագիտական ուսուցման երրորդ ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու վերլուծությունները /2-րդ կիսամյակ/

### Համագումարներ և հանդիպումներ

Աշխատաժողով ձեռնարկություններում եվրոպական շարունակական մասնագիտական ուսուցման ուսումնասիրության հետագա զարգացման և կատարելագործման վերաբերյալ /2009թ. աշուն/

### Այլ առանցքային ելքատվյալներ

- Վիճակագրությունները վերլուծվում և տրամադրվում են համեմատական և համատեքստին համապատասխանեցված եղանակով
- LFS տվյալների ավելի լավ շահագործում՝ ներառյալ ազգային տվյալները
- Վիճակագրությանն աջակցող ծառայություններ՝ ներառյալ ինտերնետը, վերանայումը և օժանդակություն տարբեր հրատարակություններին, տվյալների ապահովմանը և տնային պայմաններում ձեռք բերվող տեղեկատվության ծառայությանը
- Աջակցություն մեթոդաբանական հետագա զարգացումներին հետևյալի միջոցով՝
  - Հետազոտություն Մեծահասակների Կրթության Ուսումնասիրության վերաբերյալ
  - Ակտիվ գործակցություն գործընկեր այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրահամայնքի երկրների վիճակագրական գրասենյակն /Eurostat/ ու ՏՀԶԿ-ն /OECD/ և մասնակցություն միջազգային տարբեր աշխատանքային խմբերում և հանդիպումներում

ՈՒՐՈՒՅՆ ՆՊԱՏԱԿ

## Հմտությունների, կարողությունների և ուսումնառության եվրոպական միտումների ու մարտահրավերների մեկնաբանում

## Գործողություն՝ Հմտության կարիքների վերլուծություն

**Վաղ որոշարկել և կանխորոշել հմտության նոր առաջացող և հետագա զարգացումները, ինչպես նաև վերլուծել հմտությունների անհամապատասխանություններն եվրոպական, ազգային, ոլորտային և ընկերության/մասնագիտական մակարդակներում և փոխանցել արդյունքները՝ խրախուսելու կրթության ու ուսուցման քաղաքականություններին**

### Գործողության հետևանքային ցուցիչներ

Քաղաքականություն մշակողներին, սոցիալական գործընկերներին, հետազոտողներին և պրակտիկայում գտնվողներին եվրոպական և միջազգային մակարդակներում հմտության կարիքների վերլուծության և կանխորոշման վերաբերյալ տեղեկատվություն ու փորձագիտություն ստանալու և փոխանակելու հնարավորություն տալով՝ Cedefop-ը ձեռնամուխ է լինում արդյունքների փոխանցմանը կրթության և ուսուցման քաղաքականություններ: Այս ոլորտում փորձագետների ակտիվ մասնակցությունը և հաղորդակցությունը նրանց հետ երաշխավորվում է եվրոպական Հանձնաժողովի աշխատանքային խմբերում ցուցաբերած մասնակցությամբ և Cedefop-ի Skillsnet պլատֆորմով:

Տարբեր մակարդակներում հմտության կարիքների ու հմտության անհամապատասխանության կանխորոշման և վերլուծման միջոցով կատարելագործելով աշխատաշուկան՝ գործողությունը հետամուտ է լինում քաղաքականության մշակմանը կրթության, ուսուցման և զբաղվածության մեջ:

Cedefop-ի՝ հմտության կարիքների վերլուծության վերաբերյալ փորձագիտությունը ծնավորվում է շահագրգիռ անձանց կողմից տարբեր միջոցառումներում և աշխատանքային խմբերում, ինչպես արդեն իսկ եղել է 2008թ.-ին:

Նախագիծ 1. **Հմտության պահանջարկի և առաջարկի կանխորոշում**

Եվրոպայում հմտության պահանջարկի և առաջարկի կանխորոշում՝ նախագծելով և վերլուծելով հմտության հետագա կարիքները, առաջարկը և նրանց հնարավոր անհավասարությունները

Ելքային ցուցիչներ 2009

#### Հրատարակություններ

Հմտությունների առաջարկի կանխորոշման և աշխատաշուկայի հնարավոր հետագա անհավասարությունների վերլուծության արդյունքները /2-րդ կիսամյակ/

#### Համագումարներ և հանդիպումներ

- Agora /հավաքատեղի/ համագումար 1-ին կիսամյակի ընթացքում՝ ներկայացնելու և քննարկելու հիմնականում հմտությունների առաջարկի կանխորոշումների և աշխատաշուկայի հնարավոր անհավասարությունների արդյունքները՝ հավանաբար համագործակցելով Չեխիայի նախագահության հետ
- Փորձագետների աշխատաժողովներ՝ քննարկելու մեթոդաբանությունը և հաստատելու հմտության պահանջարկի ու առաջարկի սիստեմատիկ կանխորոշման տվյալները /2-րդ կիսամյակ/

#### Այլ առանցքային ելքատվյալներ

- Մշակել հմտության պահանջարկի և առաջարկի սիստեմատիկ կանխորոշման ծրագիր՝ ներառյալ տարբեր սցենարներ, ինչպիսին է քաղաքականության/ազդեցության սցենարը, եթե հնարավոր է

- Ապահովել աշխատաշուկայի հնարավոր անհավասարությունների վերաբերյալ մանրամասն վերլուծություն
- Ուսումնասիրել հմտության պահանջարկի և առաջարկի միջև փոխհարաբերության մոդելի/մեթոդաբանության մշակման իրագործելիությունը
- Շարունակել ակտիվ մասնակցությունը DG EAC և DG EMPL գործընթացներին, ինչպես օրինակ 2008թ. «Նոր հմտություններ նոր աշխատանքների համար» նախաձեռնության վերաբերյալ Հանձնաժողովի Զեկույցը

Նախագիծ 2. **Հմտության կարիքների որոշարկում սեկտորներում և ձեռնարկություններում**

Տնտեսական ռազմավարական նշանակության տարբեր սեկտորներում և ոլորտներում հմտության և կարողության կարիքների վերաբերյալ քանակական ու որակական տեղեկատվության միջոցով մեծացնել Եվրոպայում հմտության հետագա կարիքների և ձեռնարկություններում հմտության ու ուսուցման կարիքների վերաբերյալ գիտելիքի պաշարը:

Ելքային ցուցիչներ 2009

**Հրատարակություններ**

«Եվրոպայում հմտության կարիքների վերաբերյալ գործատուների հետազոտությունը» ուսումնասիրության արդյունքները /2-րդ կիսամյակ, առցանց/

**Համագումարներ և հանդիպումներ**

- Փորձագետների աշխատաժողով եվրոպայում գործատուների հետազոտության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքների և դրան հետևող քայլերի մասին /1-ին կիսամյակ/
- Փորձագետների աշխատաժողով առանձին սեկտորներում հմտության վերլուծությունների մեթոդների և մոտեցումների մասին՝ գործակցելով Eurofound-ի հետ /2-րդ կիսամյակ/
- 2009թ. փետրվարին միջազգային սեմինար աշխատանքային ընդհանուր հմտությունների չափագրման մասին՝ համագործակցելով ՏՀԶԿ-ի /OECD/ հետ /*Մեծահասակների Կարողությունների Միջազգային Գնահատման Ծրագրի (PIAAC)* Աշխատանքի Պահանջների Մոտեցման մոդուլի թռիչքային արդյունքները/

**Այլ առանցքային ելքատվյալներ**

- Իրականացնել բացատրական աշխատանք գործատուների հետազոտությունների վերաբերյալ՝ որպես մի գործիք՝ որոշարկելու հմտության և ուսուցման հետագա կարիքներն Եվրոպայի պետական և մասնավոր ձեռնարկություններում՝ նաև ներգրավելով սոցիալական գործընկերներին. հնարավորության դեպքում սկսել մշակել եվրոպական գործատուների հմտության թռիչքային հետազոտություն
- Ձևավորել ազգային ոլորտային մոտեցումների ու մեթոդաբանությունների ընդհանուր պատկերը՝ որոշարկելու հմտության կարիքներն եվրոպական մակարդակում իրենց հնարավոր օգտագործմամբ՝ նաև ներգրավելով սոցիալական գործընկերներին

Նախագիծ 3. **Վերլուծել հմտության անհամապատասխանությունն ու վերջինիս ազդեցությունը**

Իրականացնել տեսական և փորձի վրա հիմնված հետազոտություն՝ քաղաքականություն մշակողներին ապահովելու նոր գիտելիք և հմտության անհամապատասխանության տարբեր տեսակների, նրանց ազդեցության վերաբերյալ հետազոտությունների արդյունքներ:

Ելքային ցուցիչներ 2009

**Հրատարակություններ**

Հմտության անհամապատասխանության դասակարգման /տաքսոնոմիա/ վերաբերյալ առաջին ուսումնասիրություն՝ հիմնված ա) հմտության անհամապատասխանության տեսակի, բ) վերլուծության մակարդակի, գ) հմտության անհամապատասխանությունը գնահատելու համար կիրառվող մեթոդների, դ) ազդեցության բնույթի (ժամանակավոր/մշտական,

կարճաժամկետ/միջնաժամկետ/երկարաժամկետ) և հմտության անհամապատասխանությանն արձագանքելու համար քաղաքականության արդյունավետ քայլերի վրա /2-րդ կիսամյակ/

### Համագումարներ և հանդիպումներ

Քաղաքականության վերաբերյալ աշխատաժողով՝ արձագանքելու և/կամ կանխելու հմտության անհամապատասխանությունը /2-րդ կիսամյակ/

### Այլ առանցքային ելքատվյալներ

- Վերլուծել և տարածել հետազոտության արդյունքում ստացված տվյալները, որոնք ապահովում են նոր պատկերացում հմտության անհամապատասխանության տարբեր տեսակների, մասնավորապես հմտության անգործածելիության, ավելցուկային կրթության և հմտության պակասի մասին, ինչպես նաև տարբեր մակարդակներում նրանց ազդեցության և հմտության անհամապատասխանությունը կրճատելուն ուղղված քաղաքականությունների արդյունավետության մասին,
- Նախապատրաստական աշխատանքներ հմտության անհամապատասխանության հետազոտության մեջ առկա խնդրոնդոտների վերաբերյալ փորձի վրա հիմնված ուսումնասիրությունների համար:

Նախագիծ 4. **Skillsnet /Հմտությունների համացանց/**

Իրագործել *Skillsnet* համացանցը՝ մի պլատֆորմ, որը միավորում է բարձր որակավորումներ ունեցող հետազոտողների ու փորձագետների՝ քննարկելու հմտության կարիքների վերլուծության և եվրոպական ու միջազգային մակարդակներում կանխորոշման մեթոդները և արդյունքները

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

Սիստեմատիկ տեղեկատուներ ու տեղեկատվական այլ նյութեր՝ ներառյալ աշխատանքային և քննարկման ենթակա փաստաթղթերը և՛ տպված, և՛ առցանց տարբերակներով:

### Համագումարներ և հանդիպումներ

### Այլ առանցքային ելքատվյալներ

- Տարածել Skillsnet համացանցը՝ ներգրավելու ավելի շատ երկրներ և փորձագետներ, պահպանել արգասաբեր և արդյունավետ համագործակցությունը Skillsnet-ի անդամների հետ
- Անընդհատ փոխանակել տեղեկատվություն Եվրոպայում հմտության կարիքների և առաջարկի հիմնական միտումների ու զարգացումների մասին և՛ քանակական, և՛ որակական առումով
- Ստեղծել Skillsnet-ի հավելյալ կայքէջեր

ՈՒՐՈՒՅՆ ՆՊԱՏԱԿ

## Մասնագիտական կրթության և ուսուցման առավելությունների գնահատում

## Գործողություն՝ ՄԿՈՒ հետազոտություն

**Գործողության նպատակն է վերանայել, վերլուծել ՄԿՈՒ հետազոտությունն ու դրան առնչվող ոլորտները և ծանուցել դրանց մասին՝ ներառյալ տնտեսության ու աշխատաշուկայի հետ կապերը, նախաձեռնել նոր հետազոտություն, որը կարող է հարթել գիտելիքի հետ կապված թերությունները, խթանել հետազոտական աշխատանքներով զբաղվող անձանց համագործակցությունն ու փորձի փոխանակումը, ինչպես նաև նպաստել հետազոտողների, քաղաքականություն մշակողների և պրակտիկայում գտնվողների միջև հաղորդակցման և կապի ստեղծմանը..**

Գործողության նպատակն է կատարելագործել ՄԿՈՒ տնտեսական և սոցիալական առավելությունների մասին գիտելիքն անհատների, սոցիալական խմբերի, ձեռնարկությունների, տնտեսական հատվածների և հասարակության համար, գնահատել կյանքի շրջանի տարբեր հատվածներում ՄԿՈՒ ներդրումներից ստացված տարբեր եկամուտները և համեմատել կրթական հնարավոր այլ ներդրումների հետ: Այսպիսի գիտելիքը ծայրահեղ կարևոր է նախնական և շարունակական ՄԿՈՒ-ին առնչվող քաղաքականությունների և միջոցների ստեղծման համար:

### Գործողության հետևանքային ցուցիչներ

ՄԿՈՒ տնտեսական և սոցիալական ուրույն առավելությունների վերաբերյալ փաստեր ապահովելով՝ Cedefop-ը հարթում է գիտելիքի հետ կապված թերությունները և համալրում է կրթության և ուսուցման քաղաքականությունը, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական հետագա հետազոտությունը:

Cedefop-ը հիշատակվում է ՄԿՈՒ հետազոտության վերաբերյալ միջազգային գրականությունում ՄԿՈՒ տնտեսական և սոցիալական առավելությունների վերաբերյալ իր կատարած աշխատանքի համար: Որոշում կայացնողները տեղյակ են ՄԿՈՒ առավելությունների մասին և նկատի են ունենում դրանք իրենց քաղաքականություններում:

---

Նախագիծ 1. **ՄԿՈՒ տնտեսական և սոցիալական առավելությունների մասին եվրոպական հետազոտության վերաբերյալ զեկույց**

Իրականացնել փորձի վրա հիմնված հետազոտություն՝ քաղաքականություն մշակողներին և հետազոտողներին ապահովելու նոր գիտելիք և ՄԿՈՒ տնտեսական ու սոցիալական առավելությունների վերաբերյալ հետազոտության եզրակացություններ: Պատրաստել նախնական և սինթեզված զեկույց՝ ներկայացնելով հետազոտության տեսությունները, մեթոդներն ու արդյունքները և քաղաքականության մշակման հետևանքները, որը պետք է տպագրվի 2011թ.-ին՝ որպես Cedefop-ի հինգերորդ Հետազոտության զեկույց

Ելքային ցուցիչներ 2009

---

#### Հրատարակություններ

---

#### Համագումարներ և հանդիպումներ

---

#### Այլ առանցքային ելքատվյալներ

- Նախագծել, մշակել և մշտադիտարկել հետազոտություն՝ ստեղծելու նոր հիմունքներ ՄԿՈՒ ուրույն առավելությունների մասին՝ ներառելով և՛ տնտեսական, և՛ սոցիալական արդյունքներն ու բոլոր մակարդակները՝ հասարակություն, սեկտորներ, ընկերություններ, անհատներ և անհատների խմբեր,
- Սինթեզել կրթության և ՄԿՈՒ առավելությունների վերաբերյալ մատչելի հետազոտությունները և վերանայել ոլորտին առնչվող տեսությունները, մեթոդներն ու տվյալները:

---

Նախագիծ 2. **Եվրոպական հետազոտական գործընթացների ընդհանուր պատկեր**

Եվրոպական հետազոտության ընդհանուր պատկերը /European Research Overview (ERO)/ խթանում է ՄԿՈՒ-ին առնչվող խաչաձև տեղանքային հետազոտությունը և օժանդակում է գիտելիքի ու տեղեկատվության փոխանակմանը: Այն իրականացնում է առկա հետազոտության և զարգացման գործընթացների վերաբերյալ վերլուծություն՝ կիրառելով հետազոտության քանակական և որակական մեթոդներ համեմատական կրթությունում: 2009թ. թեմատիկ կիզակետը կլինեն ՄԿՈՒ տնտեսական և սոցիալական առավելություններն ու ֆինանսավորումը:

Ելքային ցուցիչներ 2009

---

#### Հրատարակություններ

Անդամ պետություններում, Նորվեգիայում և Իսլանդիայում ՄԿՈՒ կրթության տնտեսական ու սոցիալական առավելությունների և ֆինանսավորման վերաբերյալ հետազոտության մասին Ազգային Հետազոտության Զեկույցների առցանց հրատարակում՝ տրամադրված ReferNet-ի կողմից:

Համագումարներ և հանդիպումներ

Այլ առանցքային ելքատվյալներ

Ազգային Հետազոտության Զեկույցների բանաքաղում և վերլուծություն՝ պատրաստելու վերլուծական ամփոփում, որը կներառվի Cedefop-ի՝ ՄԿՈՒ տնտեսական ու սոցիալական առավելությունների վերաբերյալ զեկույցում և կտպագրվի 2011թ.-ին:

## Գործողություն՝ Քաղաքականության վերլուծություն

**Քաղաքականության վերլուծության նպատակն է իրականացնել քաղաքականության առաջընթացի համեմատական և համատեքստին համապատասխանեցված վերլուծություն, ինչպես նաև ծանուցել քաղաքականության գլխավոր հատվածներում տեղի ունեցող զարգացումների մասին՝ մասնավորապես, հաշվի առնելով ԵՄ քաղաքականության ՄԿՈՒ՝ կոպենհագենյան գործընթացում սահմանված նպատակները:**

Այս ուրույն նպատակի համար գործողությունը կոչված է՝ շահագրգիռ կողմերին տեղեկացնելու ՄԿՈՒ ֆինանսավորման մակարդակի, միտումների և ձևանմուշների մասին՝ ներառյալ Շարունակական Մասնագիտական Ուսուցումը:

Գործողության հետևանքային ցուցիչներ

ՄԿՈՒ ֆինանսավորման մակարդակի, միտումների և ձևանմուշների մասին ավելի լավ իրազեկված են շահագրգիռ գլխավոր կողմերը, և սա նպաստում է ոլորտում լավագույն փորձի փոխանակմանը:

Նախագիծ **ՄԿՈՒ ֆինանսավորման նորարարական մեխանիզմներ**

Իրականացնել ՄԿՈՒ ֆինանսավորման նոր մոդելների ու միտումների քաղաքականության համեմատական վերլուծություն եվրոպական մրցունակ երկրներում՝ կենտրոնանալով ծախսերի բաշխման քաղաքականությունների և ֆինանսավորման նորարարական այնպիսի մեխանիզմների վրա, ինչպիսիք են ոլորտային ուսուցման հիմնադրամները, անհատական ուսումնառության բանկային հաշիվներ, վարկեր, հարկային արտոնություններ:

Ելքային ցուցիչներ 2009

Հրատարակություններ

- Ուսումնասիրություն «Հարկային արտոնություններ՝ օժանդակելու կրթությանն ու ուսուցմանը»-ի վերաբերյալ, որն իրենից ներկայացնում է անդամ վեց պետությունների մանրակրկիտ վերլուծություն /1-ին կիսամյակ/,
- Ուսումնասիրություն «Ընտրյալ անդամ պետություններում ՄԿՈՒ ֆինանսավորման մեխանիզմներ»-ի վերաբերյալ /ԵՄ-12-ում ՄԿՈՒ ծախսերի բաշխման գործիքներ, 2-րդ կիսամյակ/:

Համագումարներ և հանդիպումներ

- Կրթության և ուսուցման ծախսերի հարկային ռեժիմի վերաբերյալ համագումար՝ գործակցելով DG TAXUD-ի հետ /1-ին կիսամյակ/,
- ԵՄ-12-ում ՄԿՈՒ ծախսերի բաշխման քաղաքականությունների/գործիքների վերաբերյալ սեմինար /1-ին կիսամյակ/,
- Ոչ ԵՄ երկրներում ՄԿՈՒ ֆինանսավորման վերաբերյալ համագումար՝ գործակցելով ԵԿՀ-ի (ETF), ՏՀԶԿ-ի (OECD) և ԱՄԿ-ի (ILO) հետ /2-րդ կիսամյակ/:

Այլ առանցքային ելքատվյալներ

- Տարածել ոչ ԵՄ պետություններում ՄԿՈՒ քաղաքականությունների վերաբերյալ ուսումնասիրությունը /որը ներառում է ֆինանսավորումը/,

- Իրականացնել վարկերի և ֆինանսական հաստատությունների հնարավոր ներգրավման վերաբերյալ ուսումնասիրություն:

ՈՒՐՈՒՅՆ ՆՊԱՏԱԿ

## Մասնագիտական կրթության և ուսուցման վարկանիշի բարձրացում

### Գործողություն՝ *Մասնագիտական ուսուցման եվրոպական հանդես*

***Մասնագիտական ուսուցման եվրոպական հանդեսը*** **գիտական հանդես է, որի նպատակն է ծանուցել եվրոպական ՄԿՈՒ քաղաքականությունների մասին և ձեռնամուխ լինել եվրոպայում մասնագիտական ուսուցման վերաբերյալ բանավեճի ու քննարկման ծավալմանը՝ հրատարակելով հոդվածներ այս ոլորտի հետազոտությունների, փորձերի, քաղաքականությունների և նորարարությունների մասին:**

**Գործողության հետևանքային ցուցիչներ**

Ապահովել պլատֆորմ՝ տարածելու հետազոտության, քաղաքականության և փորձի արդյունքում ստացված տվյալներն եվրոպայում և նրանից դուրս:

Ելքային ցուցիչներ 2009

**Հրատարակություններ**

- Երեք հատոր միայն անգլերեն լեզվով.
  - Հատոր 46 (I/2009) բարձրագույն կրթության և ՄԿՈՒ մասին,
  - Հատոր 47 (II/2009) ընդհանուր հիմնախնդիրներ,
  - Հատոր 48 (III/2009) ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության գնահատման, ճանաչման և վկայագրման մասին:

**Համագումարներ և հանդիպումներ**

Խմբագրական կոմիտեի մեկ հանդիպում

**Այլ առանցքային ելքատվյալներ**

- Հետաքրքրվածություն ցուցաբերելու կոչ՝ շարունակելու ՄՈՒԵՀ տպագրման գործընթացը,
- Եվրոպական հանդեսի ապագայի և 2009թ. հունիսին կայացրած որոշման մասին ներկայացվող առաջարկներ Կառավարման Խորհրդին

ՈՒՐՈՒՅՆ ՆՊԱՏԱԿ (ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ)

## Ծանուցում եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականությունների մասին

### ABB /Գործողության վրա հիմնված բյուջե/ Գործողություն՝ *Կրթություն և Ուսուցում 2010*

***Կրթություն և Ուսուցում 2010-ն*** **ապահովում է եվրոպական շրջանակ կրթության և ուսուցման ոլորտում անդամ պետությունների և Հանձնաժողովի միջև քաղաքականության համագործակցության համար:** Իր ուրույն նպատակին՝ «Ծանուցում ԵՄ ՄԿՈՒ քաղաքականությունների մասին», հասնելու համար Cedefop-ը կշարունակի էապես նպաստել հայեցակարգային զարգացմանը, եվրոպական սկզբունքների, ՄԿՈՒ և ցկյանս ուսումնառության համար գործիքների ու շրջանակների նախագծմանն ու իրագործմանը, որի նպատակն է բարձրացնել որակավորումների թափանցիկությունը և մեծացնել ուսումնառուների և աշխատողների շարժունությունը: Ակտիվ համագործակցությունն ԵԿՀ-ի /ETF/ և ԱՄԿ-ի /ILO/ հետ

կերաշխավորվի, հատկապես որակավորումների շրջանակների և շարժունության գործիքների զարգացումների մասով:

### Գործողության հետևանքային ցուցիչներ 2009

- Cedefop-ի տեխնիկական, գիտական և համակարգողական օժանդակությունն աշխատանքային խմբերին, համացանցերին, որոնք կոչված են՝ իրագործելու «Կրթություն և Ուսուցում 2010» օրակարգը, նպաստել է անդամ երկրների մակարդակում եվրոպական ընդհանուր գործիքների և սկզբունքների զարգացմանն ու իրագործմանը, ինչպես նաև մեծացրել է համեմատության և կրթության ու ուսուցման ոլորտում եվրոպական համագործակցության հիմքերը,
- Cedefop-ի՝ ՄԿՈՒ ապահովման լիազորագրման և վկայագրման որակի հավաստման մեխանիզմների վերաբերյալ անկախ համեմատական ուսումնասիրություններն ու վերլուծությունները, կրեդիտային համակարգերը և որակավորումների շրջանակը, ցկյանս ուղղորդման քաղաքականություններն ու ռազմավարություններն որոշարկել և լրացրել են գիտելիքի պակասը, ուղղակիորեն մտցվել են քաղաքականության մշակման և ինստիտուցիոնալ զարգացումների մեջ ԵՄ, ազգային, ոլորտային մակարդակներում, ինչպես նաև նպաստել են եվրոպական սկզբունքների, գործիքների և շրջանակների հստակ իրագործմանը,
- Cedefop-ի աշխատանքը մեծացրել է եվրոպական գործիքների /օր.՝ ՄԿՈՒԵԿ (ECVET), ՈԵՇ (EQF), Europass/ միջև կապերի և համեմատականության մասին իրազեկվածությունը,
- Cedefop-ը դիտարկվում է որպես ինստիտուցիոնալ առանցքային դերակատար ԵՄ ընդհանուր գործիքների, սկզբունքների և շրջանակների առումով՝ ներառյալ նրա մասին հստակ հիշատակումն ԵՄ քաղաքականության և աշխատանքային փաստաթղթերում, տեխնիկական և գիտական խորհրդատվություն տրամադրելու մասին ԵՄ քաղաքականություն մշակողներից ու շահագրգիռ կողմերից ստացված խնդրանքները, անդամությունն եվրոպական Խորհուրդներում/Կոմիտեներում, հրավերները՝ նպաստելու միջազգային և ԵՄ գլխավոր միջոցառումներին:

---

Նախագիծ

**Ցկյանս Ուսումնառության Որակավորումների Եվրոպական Շրջանակ՝ ՈԵՇ**

Որակավորումների Եվրոպական Շրջանակը /ՈԵՇ/ թարգմանական մի ցանց է Եվրոպայի որակավորումների համար, որի նպատակն է օժանդակել խաչաձև սահմանային շարժունությանը և ցկյանս ուսումնառությանը: 2009թ.-ին Cedefop-ը, սերտորեն համագործակցելով Հանձնաժողովի հետ, կշարունակի ապահովել գիտական ու համակարգողական աջակցություն ՈԵՇ-ի Խորհրդատվական Խմբին /և նրա ենթախմբերին/ և իրականացնել մի շարք անկախ համեմատական ուսումնասիրություններ և վերլուծություններ ոչ բավականապես շոշափված հիմնախնդիրների շուրջ:

Ելքային ցուցիչներ 2009

---

### Հրատարակություններ

Համեմատական ուսումնասիրությունն այն մասին, թե ինչպես է երաշխավորվում վկայագրման գործընթացների որակը, կհրատարակվի 2009թ. 1-ին կիսամյակի ընթացքում և լայնորեն կտարածվի: Ուսումնասիրության արդյունքներն իրենցից ներկայացնում են էական ներդրում ՈԵՇ-ի Խորհրդատվական Խմբի՝ որակի հավաստման հիմնախնդիրներով զբաղվող ենթախմբի աշխատանքներում:

---

### Համագումարներ և հանդիպումներ

---

### Այլ առանցքային ելքատվյալներ

ՈԵՇ-ի Խորհրդատվական Խումբը և ենթախմբերը, սերտորեն համագործակցելով DG EAC-ի հետ, աջակցեցին՝ երաշխավորելու ՈԵՇ-ի իրագործման համապարփակությունն ու թափանցիկությունը: Մշակվում է հայեցակարգային և մանրամասն տեղեկատվություն:
Հետազոտություն է իրականացվում՝ ուսումնասիրելու, թե ՄԿՈՒ-ն որքան տեղ է զբաղեցնում ՈԵՇ-ի որակավորումների 7-րդ և 8-րդ մակարդակներում: Որոշարկվում են այս հատվածի հնարավորություններն ու խոչընդոտները, և գնահատվում են առկա միտումները:

Ներքին վերլուծություն է իրականացվում՝ քարտեզագրելու Որակավորումների Ազգային Շրջանակների /ՈԱՇ/ սրընթաց զարգացումը և որոշարկելու նրանց հիմնական ուժն ու թերությունները:
LdV-ի և LLP-ի շրջանակներում վերլուծվում են ՈԵՇ-ի փորձարկման ու թեստավորման արդյունքները, ինչպես նաև որոշարկում են խաչաձև ոլորտային միտումները:
Ամփոփվում է ՈԵՇ-ի տեղեկատվական պլատֆորմը, հիմնված Cedefop-ի 2008թ. թռիչքային նախագծի վրա, և օգտագործվում է որպես հիմք՝ համապատասխանեցնելու որակավորումների ազգային մակարդակները ՈԵՇ-ին: Մշակվում է նաև տեղեկատվական պլատֆորմ՝ արձագանքելու ոլորտային կազմակերպությունների կարիքներին ՈԵՇ-ը կիրառելիս:

Նախագիծ

**Մասնագիտական Կրթության և Ուսուցման Եվրոպական Կրեդիտային համակարգ՝ ՄԿՈՒԵԿ**

Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգը՝ ՄԿՈՒԵԿ-ը, գործիք է՝ հեշտացնելու եվրոպական շարժունությունը ՄԿՈՒ-ում և երիտասարդ ու մեծահասակ ուսումնառուների մուտքի հնարավորությունը ցկյանս ուսումնառություն: 2009թ.-ին Cedefop-ը կշարունակի տրամադրել տեխնիկական և գիտական աջակցություն Հանձնաժողովի՝ ՄԿՈՒԵԿ-ով զբաղվող աշխատանքային խմբերին՝ միտված լինելով ՄԿՈՒԵԿ-ի երաշխավորության ընդունմանը: Այն նաև հետամուտ կլինի ՄԿՈՒԵԿ-ի իրագործմանն ազգային, տարածաշրջանային և ոլորտային մակարդակներում:

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

- Եվրոպայում ազգային, տարածաշրջանային և ոլորտային մակարդակներում ՄԿՈՒԵԿ-ի իրագործման վերաբերյալ բրոշյուր է հրատարակվում,
- Գրվում են հոդվածներ և տպագրվում ՄԿՈՒԵԿ-ի վերաբերյալ եվրոպական տեղեկատուի մեջ /թողարկվում է Հանձնաժողովի կողմից ՄԿՈՒԵԿ-ն իրագործելու վերաբերյալ իր կոչի շրջանակներում/,
- Ավարտվում է /2009թ. աշնանը/ կրեդիտային համակարգերի և որակավորումների շրջանակի միջև փոխհարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրությունը և կիրատակվի 2009թ. վերջին/2010թ. սկզբին: ԵՄ մակարդակում մշակվում են սցենարներ կրեդիտների և որակավորումների շրջանակի համար:

### Համագումարներ և հանդիպումներ

ՄԿՈՒԵԿ-ի իրագործմանն առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ /օր.՝ մոդուլներ և կրեդիտներ/ մեկ աշխատաժողով տեղի կունենա 2009թ. երկրորդ կիսամյակին:

### Այլ առանցքային ելքատվյալներ

- Cedefop-ն ակտիվորեն և էապես օժանդակել է եվրոպական ՄԿՈՒԵԿ-ի սպառողի համար նախատեսված տեղեկատուին /կարելի է ձեռք բերել 2009թ. վերջին/,
- Cedefop-ն եղել է ակտիվ եվրոպական ՄԿՈՒԵԿ-ի համացանցի զարգացման մեջ /այն պետք է հիմնվի Հանձնաժողովի կողմից 2009թ.-ին/,
- Cedefop-ն աջակցել է Հանձնաժողովին եվրոպական ՄԿՈՒԵԿ-ի փորձարարական նախագծերի համատեքստում,
- ՄԿՈՒԵԿ-ԿՓԵՀ-ին /Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ/ առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ մեկ աշխատաժողով է տեղի ունենալու 2009թ. գարնանը: Աշխատաժողովի արդյունքում ստացված եզրակացությունները լայն կտարածվեն 2009թ. առաջին կիսամյակին,
- Եվրոպայում ցկյանս ուսումնառության կրեդիտային համակարգի պահանջների և հնարավորությունների վերաբերյալ ուսումնասիրություն է մեկնարկում՝ եվրոպական կրթական տարածքում ներկայումս կիրառվող կրեդիտային համակարգերի՝ Բարձրագույն կրթության կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական Համակարգ /ECTS/ և Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգ /ECVET/ հիման վրա,

- Կրեդիտային համակարգերի և որակավորումների շրջանակների միջև փոխհարաբերությունների վերաբերյալ երկու աշխատաժողով է կազմակերպվում /2009թ. փետրվար և սեպտեմբեր/

Նախագիծ **ՄԿՈՒ որակի ապահովում**

2009թ.-ին Cedefop-ը կշարունակի օժանդակել ԵՄ ՄԿՈՒ որակի ապահովման հենքային շրջանակի /EQARF/ վերաբերյալ Երաշխավորության ընդունմանն ու իրագործմանն ուղղված ԵՄ համագործակցությանը ՄԿՈՒ որակի ապահովման շրջանակներում:

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

«Սննդամթերքի մշակման, մանրածախ առևտրի և տուրիզմի ոլորտներում եվրոպական ՓՄՁ-ների որակի մոտեցումներ» ուսումնասիրությունը կհրատարակվի 2009թ. 2-րդ կիսամյակի ընթացքում: Արդյունքները կտրամադրվեն շահագրգիռ կողմերին ԵՄ, ազգային և ոլորտային մակարդակներում:
Որակի ապահովման և լիազորագրման եվրոպական մոտեցումների վերաբերյալ թռիչքային ուսումնասիրությունը կհրատարակվի 2009թ. 1-ին կիսամյակի ընթացքում: Արդյունքները կծառայեն որպես ներդրում 2010թ.-ին կայանալիք համագումարի և ՄԿՈՒ ապահովողների լիազորագրման վերաբերյալ համեմատական լայնածավալ ուսումնասիրության համար:

### Համագումարներ և հանդիպումներ

### Այլ առանցքային ելքատվյալներ

Բովանդակային աջակցություն ՄԿՈՒ որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի համացանցին (ENQA-VET) և սերտ համագործակցություն վերջինիս հետ՝ ակտիվ օժանդակություն տրամադրելով 2009թ.-ին կայանալիք համագումարին, թեմատիկ խմբեր և հավասար ուսումնառության գործընթացներ և դրանց արդյունքների տարածում վիրտուալ /առցանց/ հանրության միջոցով:
Ամփոփվում է անդամ պետություններում ՄԿՈՒ ապահովողների և ծրագրերի լիազորագրման մոտեցումների վերաբերյալ համեմատական վերլուծությունը: Վերլուծության արդյունքները հիմնական բովանդակային ներդրումն են 2010թ. գարնանը Cedefop-ի կողմից կազմակերպված հիմնական համագումարի համար /գործակցելով DG EAC-ի հետ/:
Ամփոփվում է սոցիալական ապահովության ոլորտում որակի ապահովման և ՄԿՈՒ դերակատարության վերաբերյալ ուսումնասիրությունը, և վերջինիս արդյունքները լայն տարածում կգտնեն:

Նախագիծ **Ուղղորդում ողջ կյանքի ընթացքում**

2009թ.-ին Cedefop-ը կշարունակի աջակցել ցկյանս ուղղորդման զարգացմանն անդամ պետություններում՝ մշտադիտարկելով ուղղորդման քաղաքականությունները, համակարգերը, փորձերն ու առաջընթացն Եվրոպայում ողջ կյանքի ընթացքում ուղղորդման ոլորտում քաղաքականությունների, համակարգերի և փորձերի ամրապնդման վերաբերյալ Խորհրդի որոշումն իրագործելիս /2004/: Համագործակցելով Եվրոպական Հանձնաժողովի և եվրոպական ցկյանս ուղղորդման քաղաքականության համացանցի հետ՝ Cedefop-ը հետամուտ կլինի ինստիտուցիոնալ համապատասխան միջավայրի և համակարգային պատշաճ մեխանիզմների ստեղծմանը՝ ցկյանս ուղղորդման համակողմանի համակարգերի կառուցմանը միտված ռազմավարություններն ազգային և տարածաշրջանային մակարդակներում ուղղելով դեպի մեծ անաչառություն, արդյունավետություն և որակ ունեցող ոլորտներ:

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

Cedefop-ի` որակավորումների և կարողությունների վերաբերյալ ուսումնասիրությունը, որն անհրաժեշտ է կարիերայի ուղղորդման խորհրդատուներին, կհրատարակվի 2009թ. առաջին կիսամյակի ընթացքում և լայնորեն կտարածվի ԵՄ և ԵՏՏ բոլոր երկրներում:

### Համագումարներ և հանդիպումներ

Ուղղորդման մասին Cedefop-ի ուսումնասիրության արդյունքների և երիտասարդների կրթություն-աշխատանք անցումների վերաբերյալ հավասար ուսումնառության միջոցառում կկազմակերպվի 2009թ. երկրորդ կեսին: Քննարկումների արդյունքում կստացվեն հստակ առաջարկներ և երաշխավորություններ այս հատվածի հետագա զարգացման համար:

### Այլ առանցքային ելքատվյալներ

Ներքին վերանայում է իրականացվում` վերլուծելու անդամ պետություններում ցկյանս ուղղորդման քաղաքականության և ռազմավարության ամենավերջին զարգացումները: Վերանայումն որոշարկում է հաջող նախաձեռնություններն ու ապահովողների երաշխավորություններն եվրոպական մակարդակում ոլորտի հետագա աշխատանքի համար:

Լավ համագործակցություն եվրոպական ցկյանս ուղղորդման քաղաքականության համացանցի հետ` մասնակցելով վերջինիս ղեկավար խմբի և համացանցի հանդիպումներին ու գործողություններին, ինչպես նաև խթանելով Cedefop-ի` ուղղորդմանն առնչվող նախաձեռնություններն այս ձևաչափում:

Cedefop-ի գիտական ուղղորդման աշխատանքը կտարածվի ու կներկայացվի ԵՄ և միջազգային միջոցառումներին: Պատրաստվում են համագումարի` ցկյանս ուղղորդման ոլորտում քաղաքականությունը, հետազոտությունն ու փորձը միմյանց կապող փաստաթղթերը:

Նախագիծ **Europass**

Europass-ը հինգ գործիքներից կազմված մի փաթեթ է` քաղաքացիներին օգնելու հստակ հասկանալ իրենց հմտություններն ու որակավորումները, հեշտ ընկալվել Եվրոպայում և գնալ արտասահման: 2009թ.-ին Cedefop-ը կշարունակի աջակցել Հանձնաժողովին Europass-ի իրագործման աշխատանքում` ի տես Խորհրդին և Եվրոպական Կառավարությանը ներկայացված երաշխավորությունների, որոնք հաջորդում են 2008թ.-ին ամփոփված արտաքին գնահատմանը: Cedefop-ը կշարունակի զարգացնել և պահպանել Europass-ի ինտերնետային ռեսուրսները /Europass-ի կայքէջ, Europass-ի շարժունության կառավարման գործիք/, օժանդակել Europass-ի ազգային կենտրոններին Europass-ի գործիքների իրագործման աշխատանքում, երաշխավորել նախաձեռնության զուգակցելիությունն առնչվող գործիքների ու ծրագրերի հետ /ՄԿՈՒԵԿ, ՈԵՇ/:

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

### Համագումարներ և հանդիպումներ

### Այլ առանցքային ելքատվյալներ

Ակտիվ օժանդակություն Europass-ի հանդիպումներին և աշխատանքային խմբերին /օր.` NEC, DG EAC, DE Զբաղվածություն, DG Ձեռնարկություն/:

Europass-ի ինտերնետային ռեսուրսները /Europass-ի կայքէջ և Europass-ի շարժունության գործիք/ լավ կառավարվում են, և վիճակագրությունը ցույց է տալիս Europass-ի պորտալի կիրառման աճ: Europass-ի ազգային կենտրոններին տրամադրվում է օժանդակություն:

Սերտորեն համագործակցելով DG EAC-ի հետ` իրագործվում են Europass-ի արտաքին գնահատման արդյունք հանդիսացող երաշխավորությունները, մասնավորապես (ա) Europass-ի մեծացված զուգակցելիությունն ՈԵՇ-ի և ՄԿՈՒԵԿ-ի հետ. մեկնարկում է թռիչքային ծրագիր /ներգրավելով անդամ որոշ պետությունների/` փորձարկելու ՈԵՇ-ի մակարդակների և/կամ ՄԿՈՒԵԿ-ի իրագործումը Europass-ի մեկ կամ ավելի գործիքներում

/օր.՝ Վկայագրի հավելված/, (բ) Europass CV-ի կատարելագործում՝ խորհրդակցելով համապատասխան շահագրգիռ այնպիսի կողմերի հետ, ինչպիսիք են գործատուները և զբաղվածության գործակալությունները՝ համապատասխան տեղեկատուների, ուղենիշների և օրինակների մշակման միջոցով մարդկանց օգնելու ավելի լավ որոշարկել և նկարագրել իրենց ուսումնառության արդյունքները /օրինակ՝ ՏՏՏ հմտություններ/:
Սերտորեն համագործակցելով DG EAC-ի հետ՝ Europass-ի ազդեցությունը /օր.՝ CV-ի կիրառումն որպես չափորոշիչ գործիք աշխատանք փնտրելու համար/ գնահատում են խորհրդատու շահագրգիռ կողմերը /մարդկային ռեսուրսի կառավարիչներ, զբաղվածության և ուղղորդման ծառայություններ/:

---

ՈՒՐՈՒՅՆ ՆՊԱՏԱԿ (ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ)

## Ծանուցում եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականությունների մասին

### ABB /Գործողության վրա հիմնված բյուջե/ Գործողություն՝ Ուսումնական այցերի ծրագիր կրթության և մասնագիտական ուսուցման մասնագետների համար

Ուսումնական այցերի ծրագիրը կրթության և մասնագիտական ուսուցման մասնագետների համար «Ցկյանս Ուսումնառության Ծրագիր 2007-2013»-ի մի մասն է «Օժանդակություն Ցկյանս ուսումնառության քաղաքականության զարգացումներին և համագործակցությանն ԵՄ մակարդակում» ծրագրի շրջանակներում: Ուսումնական այցերն իրականացվում են ազգային գործակալությունների կողմից: 2008թ. ի վեր, Եվրոպական Հանձնաժողովի հրավերով, Cedefop-ը համակարգում է ծրագիրը և կատարում է հետևյալ առաջադրանքները՝ հանդեսի պատրաստում, այցերի մշտադիտարկում, որակի ապահովում, իրագործման և արդյունքների նախնական ու վերջնական գնահատում, արդյունքների տարածում: Cedefop-ը նաև տրամադրում է հատուկ աջակցություն սոցիալական գործընկերներին նրանց իրազեկվածությունը բարձրացնելու և ծրագրում ավելի ակտիվ ներգրավվելու առումով:

#### Գործողության հետևանքային ցուցիչներ 2009

- Cedefop-ի՝ ուսումնական այցերի թեմաների վերաբերյալ աշխատանքը մեծացրել է կապակցվածությունը կրթության և ուսուցման եվրոպական քաղաքականության գերակայությունների հետ, ընդլայնել է ընդհանուր շահերին առնչվող թեմաների ծավալները սոցիալական գործընկերների համար, ինչպես նաև մեծացրել է քաղաքականության զարգացմանն օժանդակելու հիմունքները,
- Cedefop-ի՝ ուսումնական այցերի որակի ապահովման վերաբերյալ աշխատանքն ամրապնդել է երկկողմ ուսումնառությունը և մեծացրել է կրթության և մասնագիտական ուսուցման ոլորտում ընդհանուր շահերին առնչվող թեմաների շուրջ եվրոպական համագործակցության հիմքը,
- Թիրախային աջակցությունը, ուսումնական այցերի արդյունքների տարածման գործընթացներն /օր.՝ Cedefop-ի վեբ պորտալ, գլխավոր համագումարներ, սինթեզված սեմինարներ և այլն/ ամրապնդել են ուսումնական այցերի ծրագրի՝ ԵՄ ցկյանս ուսումնառության լավագույն փորձերի փոխանակման առաքելությունը և մեծացրել են ծրագրի ու ավելացված արժեքի տեսանելիությունը բոլոր թիրախային խմբերի և սոցիալական գործընկերների համար,
- Cedefop-ի՝ ուսումնական այցերի արդյունքների նախնական և վերջնական գնահատման վերաբերյալ աշխատանքն ուսումնական այցերի երկարատև ազդեցությանը հետևելու հիմք է դրել:

Համաձայնեցնելով Հանձնաժողովի հետ՝ Cedefop-ը կշարունակի ջանքեր գործադրել՝ ուսումնական այցերի ծրագիրն ավելի սերտ կապակցելու Լիսաբոնի ռազմավարությանն ու կոպենհագենյան գործընթացին:

Նախագիծ **(տե՛ս վերևում)**

Ելքային ցուցիչներ 2009

**Հրատարակություններ**
2009-10թթ. ուսումնական տարվա համար էլեկտրոնային /փետրվար/ և կոշտ /2009թ. մարտ/ տարբերակներով կտպագրվի ուսումնական այցերի գիրքը:
Ընդհանուր կրթության և ցկյանս ուսումնառության ոլորտներում ուսումնական այցերի արդյունքները վերլուծվում են և ընդհանուր պատկերը կտպագրվի 2009թ. երկրորդ կիսամյակին:
Կմշակվեն և կտպագրվեն օժանդակող նյութեր սոցիալական գործընկերների համար՝ մեծացնելու նրանց մասնակցությունն ուսումնական այցերի ծրագրին:

**Համագումարներ և հանդիպումներ**
Տեղի կունենա Ազգային գործակալությունների ամենամյա հանդիպումը /2009թ. մարտ/: Այն կամփոփի ձեռքբերումների պաշարը և կպլանավորի հետագա անելիքները:
Կկազմակերպվեն սեմինարներ ընդհանուր կրթության և ցկյանս ուսումնառության վերաբերյալ:
2009-2010թթ. այցերի կազմակերպիչների համար կկազմակերպվի գիտելիքի փոխանակման սեմինար /2009թ. երկրորդ կիսամյակ/:
Տեղի կունենա սոցիալական գործընկերների ընդհանուր շահերի թեմային առնչվող սեմինար:

**Այլ առանցքային ելքատվյալներ**
260 ուսումնական այց կիրականացվի 2008-2009թթ. ուսումնական տարվա համար և դրանք մշտադիտարկվեն 2008թ. սեպտեմբերից մինչև 2009թ. հունիս ընկած ժամանակահատվածում:
Մեկնարկել է դիմումների ընդունման գործընթացը 2009-10թթ. ուս. ուսումնական այցերի համար. ստացվել է ավելի քան 5000 դիմում մինչև 2009թ. ապրիլ ընկած ժամանակամիջոցում:
Կազմվել են 2009-10թթ. ուսումնական այցերի խմբերը:
Ամփոփվում են ծրագրի գնահատման գործիքները /ավելացված արժեքի անհատական հարցաթերթիկ/:
Մինչև 2009թ. նոյեմբեր կավարտվի 2008-09թթ. ուսումնական այցերի իրականացման գնահատումը:
2009թ. սեպտեմբերին մեկնարկում է 2010-11թթ. ուսումնական այցերի հանդեսի վերաբերյալ առաջարկների ընդունումը:
Կապահովվի մասնակիցների և կազմակերպիչների ինտերակտիվ կառավարման միջոցները ծրագրի արդյունավետ համակարգման համար:
Պետք է ապահովվի ՄԿՈՒ ներկայությունը ծրագրում /թեմաներ, այցերի ՄԿՈՒ տեսակներ, մասնակիցներ/:
Խթանվում է սոցիալական գործընկերների համապատասխան մասնակցությունը ծրագրում:
Հանդեսում ներառված են սոցիալական գործընկերների ընդհանուր շահերին առնչվող թեմաները՝ ներառյալ կենտրոնացումն առանձնահատուկ սեկտորների վրա:
Բարձրացվում է Ազգային գործակալությունների իրազեկվածությունը սոցիալական գործընկերների կարիքների մասին:

*Կրթություն և Ուսուցում 2010-ն* ապահովում է եվրոպական շրջանակ կրթության և ուսուցման ոլորտում անդամ պետությունների ու Հանձնաժողովի միջև **քաղաքականության համագործակցության համար:** Իր ուրույն նպատակին` «Հմտությունների, կարողությունների և ուսումնառության եվրոպական միտումների ու մարտահրավերների մեկնաբանում», հասնելու համար Cedefop-ը կվերլուծի Եվրոպայում որակավորումների փոփոխվող դերակատարություններն ու գործառույթները: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի ուսումնառության արդյունքների վրա` որպես հիմնական սկզբունք ՄԿՈՒ և ցկյանս ուսումնառության քաղաքականություններում և այն բանին, թե ինչպես դրանք լավագույնս կիրառել տարբեր նպատակների համար` ներառյալ դասավանդման և ուսուցման փորձերն ու ազդեցությունը մեծահասակների ուսումնառությունը բարելավելու վրա: Cedefop-ը սերտորեն կաշխատի ԵԿՀ-ի և ԱՄԿ-ի հետ, հատկապես որակավորումների գլոբալ զարգացումների շուրջ:

### Գործողության հետևանքային ցուցիչներ 2009

- Cedefop-ի գործողությունները մեծացրել են ուսումնառությունը խթանելու և կանխելու գործում որակավորումների դերակատարության և մասնավորապես այն չափի մասին պատկերացումը, որով որակավորումների համակարգերն ու շրջանակները կարող են հեշտացնել ցկյանս ուսումնառությունն ընդհանուր կրթության և հատկապես մեծահասակների ուսումնառության մեջ,
- Cedefop-ի գործողությունները մեծացրել են ուսումնառության արդյունքների մասին ընկալումը` որպես որակավորումների թափանցիկությունը մեծացնելու սկզբունք և կրթության ու ուսուցման կիրառողների, մասնավորապես անհատ ուսումնառուների, գործատուների և սեկտորների կարիքներին ավելի լավ արձագանքելու միջոց,
- Cedefop-ի գործողությունները հանգեցրել են ուսուցիչների և դասընթացավարների պահանջների ավելի լավ ընկալմանը` նկատի ունենալով ցկյանս ուսումնառության կողմից ստեղծված նոր պայմանները:

---

Նախագիծ

**Որակավորումներ և ուսումնառության արդյունքներ**

2009թ.-ին Cedefop-ը, Հանձնաժողովի հետ համատեղ, կշարունակի համակարգել ուսումնառության արդյուքների ճանաչմամբ զբաղվող խմբի աշխատանքները: Համեմատական ուսումնասիրությունների և վերլուծությունների միջոցով Կենտրոնը կնպաստի Հանձնաժողովի, անդամ պետությունների և սեկտորների ջանքերին` հետամուտ լինելու ուսումնառության արդյունքների մոտեցմանը կրթության և ուսուցման քաղաքականություններում ու փորձերում:

### Ելքային ցուցիչներ 2009

---

### Հրատարակություններ

Անփոփվում է զբաղվածության և կրթական չափորոշիչների սահմանման ու վերափոխման, ինչպես նաև որակավորումների վրա այս չափորոշիչների ունեցած ազդեցության վերաբերյալ համեմատական ուսումնասիրությունը, որը կհրատարակվի 2009թ. 2-րդ կիսամյակին: Ուսումնասիրության արդյունքները ներառում են առաջարկություններ չափորոշիչների կիրառման միջոցով աշխատաշուկայի և որակավորումների համակարգերի միջև կապերը բարելավելու համար: Արդյունքները լայն տարածում կգտնեն շահագրգիռ հիմնական կողմերի շրջանում ազգային և ԵՄ մակարդակներում:

---

### Համագումարներ և հանդիպումներ

Կարևոր համագումար կկազմակերպի 2009թ. մայիսին` քաղաքականության առանցքային մշակողներին և շահագրգիռ կողմերին ներկայացնելու Եվրոպայում որակավորումների փոփոխվող դերակատարությունների վերաբերյալ Cedefop-ի ուսումնասիրությունների եզրակացությունները: Համագումարը կնպաստի ցկյանս ուսումնառության համապարփակ ռազմավարության երկարաժամկետ զարգացմանն ազգային և եվրոպական մակարդակներում:

---

### Այլ առանցքային ելքատվյալներ

Ուսումնառության արդյունքների ճանաչմամբ զբաղվող խումբը լավ համակարգվում է: Ապահովվում է փորձի սիստեմատիկ փոխանակման, ինչպես նաև Որակավորումների Ազգային Շրջանակներին, ուսումնառության արդյունքներին և ոչ ֆորմալ ու ինֆորմալ

ուսումնառության վավերացմանն առնչվող մարտահրավերների վերաբերյալ հավասար ուսումնառության պլատֆորմ:

Ամփոփվում է «Եվրոպայում որակավորումների փոփոխվող դերակատարությունը» համեմատական ուսումնասիրությունը: Այն ապահովում է գիտականորեն առողջ հիմք որակավորումների համակարգերի և շրջանակների հետագա զարգացման համար` մասնավորապես արժագանքելով որակավորումների, ցկյանս ուսումնառության և գլոբալիզացման միջև փոխհարաբերությանը:

Ամփոփվում են ա) ուսումնառության արդյունքների և ՄԿՈՒ ուսումնական ծրագրերի միջև հարաբերության բ) ՈԵՇ-ի և ոլորտային որակավորումների միջև հարաբերության վերաբերյալ համեմատական ուսումնասիրությունները, որոնց արդյունքները կտարածվեն ՈԵՇ-ի Խորհրդատվական խմբին, ԵՄ սոցիալական գործընկերներին և ոլորտային ասոցիացիաներին:

Գործակցելով Հանձնաժողովի և անդամ պետությունների հետ` վավերացման 2009թ. նոր ցուցակ է պատրաստվում:

Եվրոպական երկարաժամկետ eՀմտությունների օրակարգի իրագործումն օժանդակվում է` նպաստելով «Հանձնաժողովների իրազեկվածության գործընթաց 2009»-ին և ակտիվ մասնակցություն ցուցաբերելով ՏՀՏ աշխատախմբի և CEN/ISSS աշխատաժողովի ԵՀ ղեկավար խմբի աշխատանքներին:

---

Նախագիծ

**ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների փոփոխվող դերակատարություններ և կարողություններ**

2009թ.-ին, հետազոտության և շահագրգիռ առանցքային կողմերի հետ համացանց կազմելու միջոցով, Cedefop-ը կշարունակի մշտադիտարկել ՄԿՈՒ ուսուցիչների ու դասընթացավարների հետ կապված միտումները և զարգացումները: Հետազոտությունը կկենտրոնանա ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների փոփոխվող դերակատարությունների ու կարողությունների, ինչպես նաև ՄԿՈՒ պրակտիկայում գտնվողների հմտության կարիքների վրա, ովքեր առնչություն ունեն ՄԿՈՒ բարեփոխումների և ուսումնառության նոր ձևաչափերի հետ: Այս համատեքստում Cedefop-ի` դասընթացավարների համացանցի ուսուցումը կշարունակի հանդիսանալ որպես առանցքային գերակա հիմնախնդիրների վերաբերյալ փորձագիտության համաեվրոպական պլատֆորմ ՄԿՈՒ ուսուցիչների ու դասընթացավարների մասնագիտական զարգացման համար:

Ելքային ցուցիչներ 2009

---

### Հրատարակություններ

ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների կարողությունների մի շարք կհրատարակվի 2009թ. փետրվարին: Կարողությունների շրջանակներն օժանդակում են ուսուցիչներին և դասընթացավարներին իրենց մասնագիտական զարգացման մեջ և ուղին հարթում են դեպի ուսուցման նոր հնարավորություններ:

Մասնագիտական զարգացմանը, որակավորումներին առնչվող ԵՄ լավագույն փորձերի և քաղաքականությունների բանաքաղության առցանց հրատարակում /2009թ. մայիս/: Փորձի այս ցուցադրությունը պարբերաբար կվերանայվի և կթարմացվի:

ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների նոր դերակատարությունների ու կարողությունների վերաբերյալ ուսումնասիրության հրատարակում /2009թ. նոյեմբեր/: Ուսումնասիրությունն որոշարկում և գնահատում է ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների փոփոխվող դերակատարություններն ու կարողություններն ուսումնառության և ուսուցման նոր ձևաչափերում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում այն կարողություններին, որոնք անհրաժեշտ են ՄԿՈՒ ուսուցիչներն ու դասընթացավարներին ուսումնառության նոր ձևաչափերում, մասնավորապես ուսումնառության արդյունքների վրա հիմնված մանկավարժական մոտեցումներն իրագործելու համար:

---

### Համագումարներ և հանդիպումներ

Cedefop-ի կողմից DG EAC-ի հետ համատեղ կազմակերպվում է ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների փոփոխվող դերակատարությունների ու կարողությունների վերաբերյալ համագումար /2009թ. փետրվարի վերջ/:
Կազմակերպվում է ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների մասնագիտական զարգացման վերաբերյալ դասընթացավարների համացանցի ուսուցման աշխատաժողով /2009թ. դեկտեմբեր/:

### Այլ առանցքային ելքատվյալներ

ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների մասնագիտական կարողությունների առկա անհամապատասխանութունների, ինչպես նաև նրանց մասնագիտական հմտությունների ու գիտելիքի կատարելագործման համար շարունակական ուսուցման հնարավորությունների և աշխատավայրում տեխնոլոգիական փոփոխություններն ու նորարարությունը հաղթահարելու վերաբերյալ ուսումնասիրություն է իրականացվում: Արդյունքները լայն տարածում կգտնեն շահագրգիռ այնպիսի կողմերի շրջանում, ինչպիսիք են Եվրոպական Հանձնաժողովի՝ ՄԿՈՒ ուսուցիչների ու դասընթացավարների և մեծահասակների ուսումնառության ոլորտում որակի կատարելագործման հիմնախնդիրներով զբաղվող Ֆոկուս խմբերը:
Cedefop-ն ակտիվորեն աջակցում է Եվրոպական Հանձնաժողովի՝ ՄԿՈՒ ուսուցիչների ու դասընթացավարների հիմնախնդիրներով զբաղվող Ֆոկուս խմբին՝ փոխանակելով իր ուսումնասիրությունների եզրակցությունները:
Cedefop-ը հետազոտության և վերլուծության միջոցով հետամուտ է լինում ՄԿՈՒ ուսուցիչների ու դասընթացավարների փոփոխվող դերակատարություններին և կարողություններին, հմտության կարիքներին ու մասնագիտական զարգացման հնարավորություններին առնչվող հիմնախնդիրների շուրջ բանավեճի ծավալմանը և Ուսուցման իր համացանցի /TTnet/ աշխատանքին:

Նախագիծ **Մեծահասակների ուսումնառություն**

2009թ.-ին Cedefop-ը ձեռնամուխ կլինի Հանձնաժողովի «Սովորելու համար երբեք ուշ չէ» պաշտոնական հաղորդագրության և մեծահասակների ուսումնառության գործողության պլանի իրագործմանն ու դրանց հետևող քայլերին հետազոտության և թեմատիկ վերանայումների միջոցով: Կենտրոնը կմշտադիտարկի և կգնահատի մեծահասակների ուսումնառության միտումներն ու քաղաքականության զարգացումներն առանցքային այնպիսի հատվածներում, ինչպիսիք են կրթության և ուսուցման մեջ մեծահասակների մուտքի հնարավորության ու մասնակցության ընդլայնումը, ապահովման որակի բարելավումը և մեծահասակ բնակչության, մասնավորապես ռիսկային խմբերի որակավորումների կատարելագործումը: Սույն աշխատանքը կապահովի փաստերի վրա հիմնված բազա ցկյանս ուսումնառության ռազմավարությունների համընդհանուր շրջանակներում մեծահասակների ուսումնառության քաղաքականությունների զարգացման համար:

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

Հիմնվելով Cedefop-ի՝ անցյալում և ներկայումս կատարվող գործողությունների արդյունքների վրա՝ իրականացվում է մեծահասակների ուսումնառության միտումների ու քաղաքականության զարգացումների վերլուծություն: Արդյունքները կհրատարակվեն և կտարածվեն 2009թ. 2-րդ կիսամյակին: Շոշափվելիք հիմնախնդիրները ներառում են՝ աշխատանքին համընթաց ուսուցում և ճկունության քաղաքականություններ, խթաններ մասնակցության համար և շարունակական ուսուցման արժեքներ, մեծահասակների ուսումնառության անձնակազմի մասնագիտական զարգացում, ոչ ֆորմալ ուսումնառության վավերացում և մեծահասակ ուսումնառուներին օժանդակող այնպիսի ծառայություններ, ինչպիսին է ուղղորդման ապահովումը: Վերանայումը նաև նկատի կունենա անդամ պետություններում մեծահասակների ուսումնառության բարեփոխումների հետևանքները /ՈԵՇ, ՈԱՇ-ներ, որակի ապահովում, ուսումնառության արդյունքներ/:

### Համագումարներ և հանդիպումներ

### Այլ առանցքային ելքատվյալներ

Cedefop-ը մասնակցում և աջակցում է Եվրոպական Հանձնաժողովի՝ մեծահասակների ուսումնառության հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խմբի և նրա ֆոկուս խմբերի աշխատանքին:

ՈՒՐՈՒՅՆ ՆՊԱՏԱԿ

## ՄԿՈՒ վարկանիշի բարձրացում

## Գործողություն՝ Արտաքին հաղորդակցություն

**Արտաքին հաղորդակցությունը** հաղորդում է Cedefop-ի՝ ՄԿՈՒ-ին առնչվող առանցքային հաղորդագրությունները և նպաստում է շահագրգիռ առանցքային կողմերի ու բոլոր լրատվամիջոցների /ներառյալ տեղական և եվրոպական լրագիրներ, ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ, արտահաստիքային լրագրողներ և մամլո գործակալություններ/ շրջանում Cedefop-ի դրական պատկերի ստեղծմանը կոշտ և էլեկտրոնային տարբերակներով պարբերաբար տրամադրվող տեղեկատվության, ինչպես նաև համաժողովների և այլ միջոցառումների միջոցով: Այն բարձրացնում է հասարակության իրազեկվածությունը՝ ստեղծելով կապ տեղական հաստատությունների հետ և կազմակերպելով այցեր ու համագումարներ:

### Գործողության հետևանքային ցուցիչներ

- Cedefop-ը նպաստում է ՄԿՈՒ կարևորության ու քաղաքականության այլ հատվածներում նրա ունեցած ավանդի մեծապես ճանաչմանը
- Cedefop-ը ճանաչված է որպես մասնագիտական կրթության և ուսուցման վերաբերյալ օգտակար, ճշգրիտ տեղեկատվության վստահելի մի աղբյուր թիրախային տարբեր խմբերի ու առանցքային շահագրգիռ կողմերի համար /Եվրոպական Հանձնաժողով, Եվրոպական Կառավարություն/

Նախագիծ **Հաղորդակցություն շահագրգիռ կողմերի հետ և հասարակական կապեր**

Հաղորդակցությունը շահագրգիռ կողմերի հետ և հասարակական կապերը հաղորդում են ՄԿՈՒ-ին առնչվող Cedefop-ի հիմնական հաղորդագրություններն առանցքային շահագիգռ կողմերին և նպաստում են Cedefop-ի դրական պատկերի ստեղծմանն ու բարձրացնում են հասարակության իրազեկվածությունը հյուրընկալող երկրում: Այն նաև ներառում է համագումարների ծառայությունը:

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

- ամենամյա աշխատանքային ծրագրի նախագիծ մինչև 2009թ. դեկտեմբեր,
- ինը սեղմագիր գրքույկների միջոցով գլխավոր հաղորդագրությունների որոշարկում և հաղորդում տարվա ընթացքում

### Համագումարներ և հանդիպումներ

- 2009թ. առաջին եռամսյակ, հանդիպում ReferNet-ի գործընկեր կազմակերպությունների /Հասարակական կապեր և Web կառավարում համատեղ գործողություն/ մամլո պաշտոնատար անձանց և web կայք ստեղծողների հետ
- 2009թ. առաջին քառորդում գործակալությունների հաղորդակցության համացանցի ամենամյա հանդիպում

### Առանցքային ելքատվյալներ

- շահագրգիռ կողմերին ուղղված շնորհանդեսներ և կապ նրանց հետ՝ ներառյալ քաղաքականություն մշակողներն եվրոպական ու անդամ պետությունների մակարդակում և սոցիալական գործընկերները,
- համապատասխանեցում և արտաքին հետազոտություններ
- աջակցություն Cedefop-ի մամլո ծածկույթին՝ համագործակցելով ReferNet-ի հետ
- տեղական և միջազգային այցելուների ընդունում և շնորհանդեսների տրամադրում
- վարչական և կազմակերպչական աջակցության տրամադրում հանդիպումներ և համագումարներ կազմակերպող կազմակերպությանը

Նախագիծ **Web-կայքի կառավարում**

Web-կայքի կառավարումը Cedefop-ի շահագրգիռ կողմերին ապահովում է մուտքի հեշտ հնարավորություն դեպի ՄԿՈՒ-ի և Cedefop-ի վերաբերյալ լավ համակարգված և նորացված տեղեկատվություն, ինչպես նաև պլատֆորմ՝ հաղորդելու և տարածելու ՄԿՈՒ զարգացումների մասին տեղեկատվությունը:

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

- գովազդի համար օգտագործվող բազմալեզվային բրոշյուր web պորտալի վերաբերյալ, որը կթողարկվի մինչև 2009թ. վերջը

### Համագումարներ և հանդիպումներ

- 2009թ. առաջին եռամսյակ, հանդիպում ReferNet-ի գործընկեր կազմակերպությունների /Հասարակական կապեր և Web կառավարում համատեղ գործողություն/ մամլո պաշտոնատար անձանց և web կայք ստեղծողների հետ

### Առանցքային ելքատվյալներ

- համապատասխանեցնել Cedefop-ի web ծառայությունները հաղորդակցման իր ռազմավարության հետ՝ վերակազմակերպելով առկա և իրագործելով տեղեկատվության նոր համակարգերը մինչև 2009թ. դեկտեմբեր
- հաստատել web պորտալը՝ որպես Cedefop-ի բոլոր web ծառայություններ մուտքի միակ կետ
- մինչև 2009թ. հունիս կատարելագործել Cedefop-ի փնտրման մեխանիզմների դասակարգումն ու դասավորվածությունը փնտրման մեխանիզմների /համակարգերի/ օպտիմիզացման ռազմավարության միջոցով
- իրականացնել բովանդակային մշտական ցուցակագրում

Նախագիծ **Լուրերի ծառայություն**

Բոլոր լրատվամիջոցներին /ներառյալ տեղական և եվրոպական լրագիրներ, ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ, արտահաստիքային լրագրողներ և մամլո գործակալություններ/ տրամադրում է սիստեմատիկ, փաքեթավորված տեղեկատվություն Cedefop-ի գլխավոր գործողությունների և եվրոպական քաղաքականության մշակման գործում ունեցած ավանդի մասին:

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

- մամլո երկշաբաթյա թողարկումներ տեղական և եվրոպական լրատվամիջոցներին էլ. փոստի միջոցով
- շաբաթվա լուրերը՝ լուսաբանված նոր web պորտալի առաջին էջում
- մամլո երկշաբաթյա թողարկումներ տեղական և եվրոպական լրատվամիջոցներին էլ. փոստի միջոցով
- ամենամսյա էլեկտրոնային տեղեկատու, որը մի տեղ է հավաքում անցյալ ամսվա գլխավոր լուրերը

Համագումարներ և հանդիպումներ

Առանցքային ելքատվյալներ
- լրատվամիջոցների ծածկույթի ձևավորում, որը կապ է հաստատում եվրոպական լրագրողների, մամլո գործակալությունների և Եվրոպական Հանձնաժողովի մամլո ծառայությունների հետ: Սա իր մեջ ներառում է լրատվամիջոցների հետ ղեկավարության կամ անձնակազմի անդամների հարցազրույցներ կազմակերպելն ու web պորտալում մամլո անկյուն ստեղծելը
- Cedefop-ի՝ web պորտալում և տեղեկատուի մեջ զետեղված բոլոր նորությունների պատրաստում և խմբագրում

ՈՒՐՈՒՅՆ ՆՊԱՏԱԿ
## ՄԿՈՒ վարկանիշի բարձրացում

### Գործողություն՝ Փաստաթղթերի և տեղեկատվական ծառայություն

**Փաստաթղթերի և տեղեկատվական ծառայությունն** աջակցում է գործընկերներին ու ՄԿՈՒ արտաքին փորձագետներին՝ տրամադրելով տեղեկատվություն եվրոպայում ՄԿՈՒ վերաբերյալ կոշտ և առցանց նյութերի համապարփակ հավաքածուի միջոցով, տրամադրում է հոդվածներ Cedefop-ի նորությունների համար և վերահսկում է Cedefop-ի ունեցած տվյալները

Գործողության հետևանքային ցուցիչներ
ՄԿՈՒ զարգացումների մասին ժամանակին ապահովվող տեղեկատվություն, որը տրամադրվում է շահագրգիռ կողմերին

Նախագիծ **Տվյալների բազաների և տեղեկատու ծառայություն**
Տվյալների բազաների և տեղեկատու ծառայությունն աջակցում է գործընկերներին և ՄԿՈՒ արտաքին փորձագետներին՝ տրամադրելով համապատասխան գրականություն ՄԿՈՒ՝ փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման համար եվրոպայում ՄԿՈՒ վերաբերյալ կոշտ և առցանց տարբերակներով նյութի ամենաընդգրկուն հավաքածուներից մեկի, ինչպես նաև հարցերին պատասխանելու և ՄԿՈՒ հիմնախնդիրների շուրջ հղումներ տրամադրելու միջոցով

Ելքային ցուցիչներ 2009

Հրատարակություններ
Անգլերեն և ֆրանսերեն լեզուներով եվրոպական ուսուցման բառարանի տպագրում մինչև 2009թ. դեկտեմբեր

Համագումարներ և հանդիպումներ

Առանցքային ելքատվյալներ
- մշտադիտարկել, հավաքագրել, կազմակերպել համակարգը և տարածել տեղեկատվական աղբյուրները՝ փաստագրելու մասնագիտական կրթության և ուսուցման վերջին զարգացումները եվրոպական/միջազգային մակարդակներում
- պահպանել առնվազն 60 000 արձանագրություն ՄԿՈՒ տվյալների բազայում
- վավերացնել և ընդգրկել ReferNet-ի անդամների ներկայացրած նյութերը
- զարգացնել գրադարանի հավաքածուները՝ հրատարակություններ, տեղեկատու նյութեր, մոխրագույն գրականություն
- պահպանել և թարմացնել եվրոպական ուսուցման առցանց բառարանը
- տեղեկատու ծառայություն արտաքին կիրառողների համար՝ պատասխանելով ՄԿՈՒ վերաբերյալ Cedefop-ի շահագրգիռ կողմերից ստացված հարցերին

- աջակցություն Cedefop-ի նախագծերին ու հետազոտությանը և՛ «Հետազոտության և քաղաքականության վերլուծություն», և՛ «Ընդլայնված համագործակցություն ՄԿՈՒ-ում և ցկյանս ուսումնառությունում» հատվածներում
- օժանդակել Cedefop-ի լուրերի ծառայություններին

---

Նախագիծ **Արձանագրությունների կառավարում և արխիվներ**

Արձանագրությունների և արխիվների կառավարումն իրականացնում է արձանագրությոյւնների կառավարման մի ծրագիր, որը լիովին համապատասխանում է փաստաթղթերի կառավարման վերաբերյալ ներքին վերահսկման չափորոշիչ 11-ին

Ելքային ցուցիչներ 2009

Հրատարակություններ

Համագումարներ և հանդիպումներ

Առանցքային ելքատվյալներ

- մշակել և կատարելագործել ուղենիշներ ու ընթացակարգեր՝ ներառյալ բիզնեսի պլանի կառուցվածքը, ավարտել դասակարգման համապարփակ սխեման,
- ապահովել Livelink-ի վերաբերյալ արձանագրությունների պահոց,
- ցուցակագրել Cedefop-ի կարևորագույն արձանագրությունները՝ տարածելով արձանագրությունների բանկը,
- գրանցել մուտքային, ելքային և ներքին փաստաթղթերը,
- խորհրդատվական հատվածներ և ծառայություններ փաստաթղթերի գործընթացի վերաբերյալ, համագործակցություն անձնակազմի հետ և վերջինիս վերապատրաստում

---

ՈՒՐՈՒՅՆ ՆՊԱՏԱԿ

## ՄԿՈՒ վարկանիշի բարձրացում

## Գործողություն՝ Հրատարակություններ

Հրատարակություններն երաշխավորում են, որ Cedefop-ի կոշտ և առցանց տարբերակներով նյութերը ներկայացվում են հստակ, կիրառողին հասկանալի եղանակով և այնպիսի ձևաչափով, որը հարմար է դրա համար նախատեսված լսարանին և համապատասխան է Cedefop-ի ընդհանուր պատկերին:

**Գործողության հետևանքային ցուցիչներ**

Առցանց և կոշտ տարբերակներով բարձրորակ նյութ, որը նպաստում է Cedefop-ի ճանաչմանը՝ որպես մասնագիտական կրթության և ուսուցման մասին օգտակար, հստակ տեղեկատվության վստահելի մի աղբյուր՝ նախատեսված թիրախային տարբեր խմբերի և գլխավոր շահագրգիռ կողմերի համար

---

Նախագիծ **Խմբագրում և թարգմանություն**

Խմբագրման և թարգմանության ծառայությունն ապահովում է բարձրորակ տեքստեր պահանջված լեզվով

Ելքային ցուցիչներ 2009

Հրատարակություններ

### Համագումարներ և հանդիպումներ

- կազմակերպել 2009թ. հունիսին կայանալիք խմբագրման ամենամյա սեմինարը և մասնակցել դրան
- մասնակցել 2009թ.-ին կայանալիք Թարգմանչության կենտրոնի կառավարման խորհրդի երկու հանդիպումներին

### Առանցքային ելքատվյալներ

- խմբագրել շուրջ 4 700 էջ անգլերեն լեզվով տեքստ՝ պատրաստելով հրատարակմանը
- թարգմանել /ըստ պահանջի/ շուրջ 10 000 էջ հիմնական հրատարակությունների համար՝ տեքստեր կայքի համար, մամլո հաղորդագրություններ և սեղմագրեր, ուսումնական այցերի փաստաթղթեր, Կառավարման խորհրդի փաստաթղթեր և այլն

Նախագիծ

**Ստեղծում և տարածում**

Ստեղծման և տարածման ծառայությունը մշակում է գրաֆիկային նախագիծ ունեցող հայեցակարգեր, որոշարկում է համակարգեր, որոնք համապատասխանում են Cedefop-ի ընդհանուր պատկերին և երաշխավորում է, որ Cedefop-ի կոշտ տարբերակով նյութերը տպագրվում են ժամանակին և հրամցվում են նախատեսված լսարանին

Ելքային ցուցիչներ 2009

### Հրատարակություններ

### Համագումարներ և հանդիպումներ

- Cedefop-ի կողմից կազմակերպված մշակութային երկու միջոցառում
- Եվրոպական Կառավարությունում կազմակերպված լուսանկարների ցուցահանդես
- մասնակցություն 2009թ. հունիսին Հրատարակությունների գրասենյակի կողմից կազմակերպված ԵՄ գործակալությունների ամենամյա հանդիպմանը

### Առանցքային ելքատվյալներ

- մշակել գրաֆիկային նախագիծ ունեցող հայեցակարգեր և որոշարկել համակարգեր, որոնք համապատասխանում են Cedefop-ի ընդհանուր պատկերին
- մշակել շուրջ 30 հրատարակությունների կոշտ և առցանց տարբերակների նախագիծը և պլանը /ներառյալ եվրոպական հանդեսը/
- մշակել գրաֆիկային նախագիծ ունեցող հայեցակարգեր երեք համագումարների և մշակութային երկու միջոցառումների նյութերի համար
- համակարգել նախագծման և հրատարակման գործընթացները
- վերջնական բնագրի ստանալուն պես նյութի տպագրման կազմակերպում՝ հրատարակելով բնագրերի 80%-ը խմբագրման ստանալուն պես՝ երեք ամսվա ընթացքում
- պահպանել էլ. փոստերի ցուցակը, նյութերը /նաև համագումարների ու ցուցահանդեսների/ հրամցնել նախատեսված լսարանին և պատասխանել Cedefop-ի նյութերը կոշտ տարբերակով ձեռք բերելու խնդրանքներին
- պատասխանել Cedefop-ի հրատակությունները կոշտ տարբերակով ձեռք բերելու խնդրանքներին աշխատանքային հինգ օրվա ընթացքում
- պահպանել շահութաբեր հիմնապաշարային մակարդակները
- միջոցների հայթայթում /պայմանագրերի կառավարում/, բյուջեներ /պրոֆիլային նախագծում և մշտադիտարկում/, ֆինանսավորում /գործողություններ, գործարքային և ֆինանսական նախաձեռնություն, ապրանքագրեր (ֆակտուրաներ)/

| • | Գործող նպատակ (ներ) | Գործողություններ | Ժամանակամիջոց (*) |
|---|---|---|---|
| 1 | Մարդկային Ռեսուրսներ | | |
| 1.1 | Ապահովել ՄՌ հիմնական ծառայություններ | | |
| | Մշակել և իրագործել ՄՌ տեղեկատու ցուցավահանակը | Սահմանել համապատասխան ՄՌ ցուցիչներ, մշակել SS գործիք /ինչպես հարմար է/ և ապահովել պարբերաբար թարմացումներ | I/2009թ. |
| | Կատարելագործել բյուջետային մշտադիտարկումն ու կանխորոշումը | Մշակել SS գործիք՝ գործակցելով SS ծառայության հետ /կենտրոնանալով ABB-ով կատարվող աշխատանքի վրա/ | I+II/2009թ. |
| 1.2 | Նոր CDR-ի իրականացում և աջակցության գործընթաց | | |
| | Նոր CDR-ի իրականացում և աջակցության գործընթաց | Նոր CDR ձևաչափի մշակում, մեքենայացված գործավարության կարգավորում CDR-ի մշակման ուղեցույց Առցանց գործիքի կիրառողի համար ձեռնարկի մշակում | I/2009թ. |
| 1.3 | Անձնակազմի կանոնակարգերի իրագործում | | |
| | Հետամուտ լինել DGE-ի նախագծմանը և հաստատված DGE-ի իրագործմանը | Նախագծել տեքստեր՝ նկատի ունենալով Հանձնաժողովի և գործակալությունների աշխատանքային խմբերի հետ քննարկումները: Հաստատված DGE-ի իրագործում | 2009թ. ընթացքում |
| 1.4 | Փաստաթղթային ընթացակարգեր և արդյունավետության բարձրացում | | |
| | Նախագծել ՄՌ գլխավոր ընթացակարգերը | Մշակել ՄՌ հիմնական ընթացակարգի գույքացուցակը և նախագծել ընթացակարգեր սահուն պլանի և համաձայնեցված ձևաչափի հիման վրա | 2009թ. ընթացքում |
| 1.5 | Բիզնեսի շարունակականություն | | |
| | Երաշխավորել գործողությունների և ծառայության շարունականությունը | Գնահատել ռիսկն ու ազդեցությունը գործողությունների վրա և մշակել ընթացակարգեր՝ ըստ Cedefop-ի ռեսուրսների | 2009թ. ընթացքում |
| 1.6 | Օժանդակել անձնակազմի կարողություններին և կարիերայի զարգացմանն ուսուցման միջոցով | | |
| | Իրականացնել ուսուցումներ աշխատանքի գլխավոր գործառույթների համար | Քարտեզագրել գործող անձնակազմի ուսուցման արձանագրությունները ըստ ուսուցման պրոֆիլների և որոշարկել թերությունները Ադապտացնել ուսուցման պրոֆիլը անձնակազմի յուրաքանչյուր նոր անդամին | 2009թ. ընթացքում |

| | | |
|---|---|---|
| Ուսուցման ընթացակարգերը համաձայնեցնել ուսուցման ռազմավարության հետ | Նախագծել ընթացակարգեր հստակ սահմանված գերակայություններով, ուսուցման կարիքների կարգերով և այլն | I/2009թ. |
| Օժանդակել 3-րդ լեզվի ուսուցման զարգացմանը | Որոշարկել կարիքները և առաջարկել ուսուցման լուծումներ 3-րդ լեզվի պահանջի համար<br>Մշտադիտարկել գործընթացը | 2009թ. ընթացքում |

(*) Ժամանակամիջոց = կիսամյակ

| Ելքատվյալներ | Հետևանքային ցուցիչներ |
|---|---|
| Տեղեկատու ցուցավահանակ, որը հասանելի է ՄՌ կառավարման քաղաքականության որոշումների միջոցով /պետք է մշակվի SS գործիք` համագործակցելով SS ծառայության հետ/ | Կառավարումն ունի հստակ ցուցիչներ` օժանդակելու ՄՌ որոշումներին |
| SS գործիք, որը պահանջում է տվյալների ներմուծում ձեռքով | Բյուջետային արդյունավետ ու ճշգրիտ մշտադիտարկում և կանխորոշում |
| Նոր CDR գործընթացի առկայություն` կիրառելով առցանց գործիք | Անձնակազմի ամենամյա գնահատման գործընթացը պարզեցվում է, դառնում հարմար կիրառողի համար, իսկ գնահատումներն ավարտվում են սահմանված ժամանակամիջոցում |
| Իրականացվող դրույթները կամփոփվեն, կիրատարակվեն և կիրագործվեն | Կանոնները պարզ են և հարմարեցվում են գործակալության կարիքներին |
| Հատուկ ընթացակարգեր | Փաստաթղթայնացված ընթացակարգեր և մեծացված արդյունավետություն |
| Բիզնեսի շարունակականության պլան | Փաստաթղթայնացված ընթացակարգեր |
| Ուսուցման պրոֆիլ` անհրաժեշտ և պարտադիր ուսուցման 2-3 տարի սահող պլանով, որը կարելի է ադապտացնել նոր անձնակազմին և օգտագործել` որոշարկելու գործող անձնակազմի ուսուցման կարիքները | Երաշխավորում, որ անհրաժեշտ և պարտադիր ուսուցումն իրականացվում է յուրաժամ և համակարգված եղանակով |
| Թափանցիկ ընթացակարգեր, որոնք հասանելի են ամբողջ անձնակազմի համար Intranet-ով | Համապարփակ և արդյունավետ մոտեցում ուսուցման պահանջներին` հիմնված թափանցիկ և ժամանակակից ընթացակարգերի վրա |
| Ուսուցման պլան` բավարարելու 3-րդ լեզվի պահանջը | Բարձրացվում է անձնակազմի զգայունությունը 3-րդ լեզվի պահանջի նկատմամբ և առկա են ուսուցման պլաններ |

